ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՅՔԻ ՃՇՇ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2025 - 27ԹԹ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Լրամշակված)

«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆ՝ Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2025

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական եւ մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործոնների, նյութերի, երեւույթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող եւ (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրութային փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական,

կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկիտարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության

աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ3), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7
1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը 7
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը 7
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 8
2.1. Տեղագրական աշխատանքներ 8
2.2. Երկրաբանահանութային աշխատանքներ 8
2.3. Ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական 9
ուսումնասիրություններ 9
2.4. Հետախուզահորերի անցում 9
2.5. Հետախուզական փորվածքների փաստագրում 9
2.6. Նմուշարկում 9
2.7. Նմուշների լաբորատոր հետազոտություններ 9
2.8. Ռադիոմետրիկ հետազոտություններ 10
2.9. Ճանապարհների շինարարություն 10
3. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ - ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ 11
4. ԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 14
4.1. Գտնվելու վայրը և ֆիզիկա-աշխարհագրական պայմանները 14
4.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն 17
4.3. Կլիմա 19
4.4. Մթնոլորտային օդ 25
4.5. Ջրային ռեսուրսներ 25
4.6. Հողեր 27
4.7. Սեյսմիկ բնութագիրը և սողանքային երևույթներ 31
4.8. Բուսական և կենդանական աշխարհ 33
4.9.Վտանգված էկոհամարարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմամշակութային հուշարձաններ 37
5.ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ 42
5.1. Ենթակառուցվածքներ 42
5.2. Քաղաքներն ու գյուղերը 44
5.3.Տնտեսությունը 45
5.4. Հողերի տնտեսական յուրացման բնութագիրը 45
5.5.Պատմության, մշակութային հուշարձաններ 47
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 52
6.1. Մթնոլորտային օդ 52
6.2. Հողային ծածկույթ 52
6.3. Ջրային ռեսուրսներ 53
6.4. Բուսական և կենդանական աշխարհ 53
6.5. Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով 55
6.5.1. Կենցաղային աղբ 55
6.6. Սոցիալական ազդեցության գնահատականը 56
6.7.Աղմուկ 57
6.8. Սանիտարա-պաշտպանիչ գոտի 58

7.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 59
7.1. Խախտված հողերի վերականգնում 60
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ 62
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 68

Հավելված 1 69
Հավելված 2 70

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Ձեռնարկող՝ *«ՎԱՅՔԻ ՃՇՇ» փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)*
Գրանցման համար՝ 44.140.00009
Գտնվելու վայրը՝ 23 փ /-/ 2 ԶԱՌԻԹԱՓ 3805, ԶԱՌԻԹԱՓ ՎԱՅՈՑ ՁՈՐ, ՀԱՅԱՍՏԱՆ
Տնօրեն՝ ԿԱՐՈ ԳԵՎՈՐԳՅԱՆ
հեռ. 095300097, e-mail: sh_khach@inbox.ru

Հայտը կազմեց՝ ԱՁ *Շ.Խաչատրյանը, ք.Երևան, Նորաշեն թաղ. 27 շ. 71 բն. հեռ. 095300097*

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲ ընկերությունը ցանկանում է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստանալ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների թույլտվություն ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում երկրաբանական - հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար, ինչը հնարավորություն կտա գնահատելու հումքի որակական պարամետրերն ու պաշարները:

Տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու համար կազմվել է երկրաբանական ուսումնասիրությունների ծրագիր:

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում 2025-27թթ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N 06 -Ն հրամանի N 3 հավելվածի հրահանգի պահանջների պահպանմամբ:

Հետազոտման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնվել տեղամասի երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի ձևաբանությունը, դիրքը, երկրաբանական-հետախուզական աշխատանքների կատարման լեռնա-տեխնիկական պայմանները, տեղամասի չափերն ու ձևը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը:

Տեղանքի ռելիեֆը իրենից ներկայացնում է հարթ մակերևույթ: Հետախուզումը իրականացվելու է հետախուզահորերով: Ըստ երկրաբանական բարդության ավազի կուտակը պատկանում է երկրորդ խմբի 2-րդ տիպին (ըստ վերոհիշյալ հրահանգի), այն դիտարկվում է որպես գրեթե հորիզոնական տեղադրված շերտաձև մարմին:

Արդյունաբերական կարգերով պաշարների եզրագծման համար հետախուզա-գծերի վրա փորվածքների միջև հեռավորությունը B կարգի պաշարների եզրագծման համար ընդունված է 100 - 200մ: Քանի որ հայցվող տեղամասը չունի երկրաչափական կանոնավոր տեսք, ուստի հետախուզահորերը տեղադրվել են ըստ տեղամասի ձևաբանության, այնպես, որ հետագայում հնարավոր լինի դանք միմյանց հետ կապել և հանքային մարմինը եզրագծել (տեղ ծրագիրի գծ.հավելված 2-ը):

Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երեք հետախուզագծերով, որոնց միջև հեռավորությունը ստացվում է 65-95մ, ինչը հնարավորութուն է տալիս օգտակար հանածոյի պաշարը լիարժեք գնահատել B կարգով:

Նախատեսվում է անցնել 6 հետախուզահոր, յուրաքանչյուրը մինչև 4գծ.մ: Բոլոր 6 հետախուզահորերի ընդհանուր խորությունը կլինի մինչև 24գծ.մ:

Հետախուզահորերի խորությունները որոշվել է հարևանությամբ գտնվող Ջերմուկի ԱԿԽ-ի հանքավայրի Թիվ 1 և 2 տեղամասերում ավազի շերտի հզորությունից ելնելով:

2.1. Տեղագրական աշխատանքներ

Նախատեսվում է հետախուզվող տեղամասի շուրջ 3 հա մակերեսի վրա կատարել 1:1000 մասշտաբի տեղագրական հանույթ: Տեղագրական հանույթի մակերեսը պրակտիկայում վերցվում է ավելի մեծ, քան հայցվող տարածքն է: Դա արվում է նրա համար, որ արդյունահանման նախագծի կազմման համար հենք հանդիսանա:

Բոլոր փորփածքներըն ու ճանապարհները գործիքի օգնությամբ տեղադրվելու են տեղագրական քարտեզի վրա:

Տոպոմարկշեյդերական աշխատանքները կատարվելու են Ընկերության գեոդեզիստ Հ.Մկրտչյանի և ԱՁ Ինեա Ադամյանի կողմից պայմանագրային հիմունքներով:

2.2. Երկրաբանահանութային աշխատանքներ

Տեղամասի 1:1000 մասշտաբի տեղագրական քարտեզի հենքի վրա կատարվելու է երկրաբանական հանույթ (պայմանագրային հիմունքներով):

2.3. Ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ

Տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հորատանցքերի անցման ընթացքում, ինչպես նաև տեղամասի հարևան տարածքների տեղազննում գեոդինամիկ երևույթների առկայության պարզաբանման նպատակով:

2.4. Հետախուզահորերի անցում

Օգտակար հանածոի մարմինը նախատեսվում է ուսումնասիրել հետախուզական հորերով, որոնց խորությունը կլինի մոտ 4գծ.մ: Նախատեսվում է անցնել 6 հետախուզահոր, որոնց ընդհանուր երկարությունը կլինի 24գծ.մ: Հետախուզահորերի անցումը կիրականացվի ընկերությանը պատկանող էքսկավատորով: Գրունտներն ունեն V և VI կարգեր:

2.5. Հետախուզական փորվածքների փաստագրում

Հետախուզահորերը փաստագվելու են: Փաստագրման ժամանակ անհրաժեշտ է ֆիքսել հումքի հատիկաչափական և նյութական կազմը: Շերտերի դասավորությունը ըստ հատիկակազմական չափերի:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Փաստագրվելու է 24գծ.մ հետախուզահոր:

2.6. Նմուշարկում

Բոլոր հետախուզահորերը պետք է նմուշարկել: Նմուշարկումն անհրաժեշտ է կատարել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N 06-Ն հրամանի N 3 հավելվածի հրահանգի պահանջների պահպանմամբ:

Ավազի և ավազակոպճային հումքի նմուշները վերցվում են յուրաքանչյուր շերտից կամ հատվածամասից: Կոպիճ չպարունակող ավազների նմուշները կրճատվում են մինչև պահանջվող զանգվածը՝ քառորդացման միջոցով: Ավազակոպճային նստվածքների նմուշարկման ժամանակ նմուշի կոպճային մասը առանձնացվում և ցրվում է ըստ չափամասերի, իսկ ավազային մասը՝ քառորդացման միջոցով կրճատվում է մինչև պահանջվող զանգվածը:

Երկրաբանական առաջադրանքը կատարելու համար նախատեսվում է վերցնել 6 նմուշ:

2.7. Նմուշների լաբորատոր հետազոտություններ

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիաներում: Փորձարկումներն իրականացնել ըստ ԳՈՍ 8735-75 –ի:

Վերցված նմուշներով կատարել՝

ա. Հատիկաչափական կազմի փորձարկումներ,

բ. Միներալաբանական և ապարաբանական հետազոտություններ,

գ. Քիմիական կազմի որոշում: Պետք է որոշել հետևյալ միացությունների՝ SiO_2, Fe_2O_3, Al_2O_3, SO_3, CaO, MgO պարունակությունները և շիկացման դեպքում կորուստները:

Դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի և օգտակար հանածոյի մարմինը ծածկող լեռնային զանգվածի և փխրեցման գործակցի որոշումներ: Որոշումներն անհրաժեշտ է իրականացնել տեղամասի երեք տարբեր կետերում (որոշումների քանակը՝ 6 հատ):

2.8. Ռադիոմետրիկ հետազոտություններ

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունների գնահատման համար նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել ապարների ռադիոմետրական չափումներ:

Հետախուզվող ավազներին պետք է տրվի ճառագայթահիգիենիկ գնահատում՝ ըստ ՆՌԲ-96 կամ ՆՌԲ-99 «Ճառագայթային անվտանգության նորմերի»:

Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար 15-20 օրը մեկ նախատեսվում է իրականացնել ռադիոչափերի (MKC-AT1117M) էտալոնացում և զգայունության ստուգում:

2.9. Ճանապարհների շինարարություն

Մինչև տեղամաս և տեղամասում ճանապարհների կառուցում և նորոգում չի նախատեսվում, քանի որ դրանք առկա են և բարվոք վիճակում են գտնվում: Հետախուզահորերի անցման ժամանակ հարթակների կառուցման անհրաժեշտություն չկա:

3. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ - ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի օրենսդրության, ՀՀ կառավարության որոշումների, հրամանների և գործող մեթոդակարգերի հիման վրա:

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.)
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), Կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպման հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական,

գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ - 150, 3.05.2023թ) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Կառավարության 20.01.2005 թ.-ի թիվ 64-Ն որոշում, որով սահմանվել է ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտա-դիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:
- «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը,
- «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 10 հունվարի 2013 թվականի N 22-Ն որոշումը,
- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,
- «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 02.11.2017թ. N 1404 -Ն որոշում:
- «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության 18.08.2021թ. N 1352-Ն որոշում,
- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության 21.10.2021թ. N 1733-Ն որոշում
- Հրաման N6-Ն 07.01.2022թ. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N365-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին
- ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. N369 - Ն հրաման:
- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության 21.10.2021թ. N 1733-Ն որոշում
- «ՀՀ տարածքում Արաքս գետից գետավազի արդյունահանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 10.01.2008թ. N18-Ն որոշում:

4. ԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

4.1. Գտնվելու վայրը և ֆիզիկա-աշխարհագրական պայմանները

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական շրջանում, բնակավայրից 5.8 կմ հարավ-արևմուտք:

Բնակավայրի հետ կապն իրականացվում է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով: Ջերմուկ քաղաքից տեղամասը գտնվում է 14 կմ հարավ-արևմուտք (նկ.1-3), Н42 մայրուղուց հեռավորությունը կազմում է 0.3կմ:

Նկ.1: ՀՀ Վայոց ձորի մարզի ակնարկային քարտեզ [16]:

Հայցվող տեղամասը զբաղեցնում է 1,39 հա մակերես և սահմանափակված է հետևյալ 8 ծայրակետային կոորդինատներով (կոորդինատները ներկայացված են ARM WGS-84 համակարգով, հատակագիծը տես հավ.1-ում) `

1.X=8549089.4755 Y=4397663.6025
2. X=8549115.5443 Y=4397691.1721
3. X=8549147.9576 Y=4397719.2951
4. X=8549189.8516 Y=4397758.8756
5. X=8549215.8951 Y=4397793.0557
6. X=8549247.0003 Y=4397825.7563
7. X=8549263.0007 Y=4397838.3923
8. X=8549268.9676 Y=4397840.2367
9. X=8549286.8984 Y=4397841.8666

10. X=8549296.6018 Y=4397842.1235
11. X=8549307.2148 Y=4397843.3099
12. X=8549343.9382 Y=4397836.8090
13. X=8549362.0795 Y=4397834.9931
14. X=8549379.2842 Y=4397834.3642
15. X=8549383.5675 Y=4397827.9044
16. X=8549354.8914 Y=4397820.7783
17. X=8549322.2676 Y=4397806.4275
18. X=8549237.5710 Y=4397756.2448
19. X=8549215.1081 Y=4397692.4278
20. X=8549165.1009 Y=4397687.3405
21. X=8549163.9031 Y=4397664.3977
1. X=8549089.4755 Y=4397663.6025

Հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝

Հյուսիսային լայնության՝ 39⁰42՛42.34՛՛ N

Արևելյան երկայնության՝ 45034՛26.26՛՛E

Շրջանի հիմնական ջրատարը Արփա գետն է, որի ձախակողմյան վտակներից են Դարբը, Սարավանը, Ամուլգետը, որոնք շրջանում ձևավորել են խորը ձորեր և կիրճեր: Տեղամասը հարուստ է քաղցրահամ և հանքային աղբյուրներով:

Որոտան-Արփա հիդրոտեխնիկական կառույցը գտնվում է հայցվող տեղամասից 11.5 կմ հեռավորության վրա:

Նկ.2: Հայցվող տեղամասի իրադրային սխեման:



Նկ.3: Հայցվող տեղամասի շրջանի իրադրային քարտեզ Մ1:10000

Հեր Հերի ջրամբարը գտնվում է հայցվող տեղամասից 1.9կմ արևմուտք, ամուլսարի ոսկու հանքավայրից հայցվող տեղամասի հեռավորությունը 3.9կմ է: Գնդեվազ բնակավայրից 5.8կմ հարավ-արևմուտք:

Ջերմուկի ԱԿԽ հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերից գտնվում է համապատասխանաբար 180 և 70 մ հեռավորությունների վրա (նկ.4):



Նկ. 4: Հայցվող տեղամասի սխեմատիկ տեղադիրքը Ջերմուկի ԱԿԽ հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերի նկատմամբ

4.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն

Հայցվող տեղամասը գտնվում է Արփայի կանյոնի հատակին, ալյուվիալ-ողողատային նստվածքաների շրջանում 1360-70 մ հիպսոմետրի նիշերի վրա: Հայցվող տեղամասն ունի հարթ ռելիեֆ որի հարաբերական թեքության անկյունը կազմում է 4°: Կանյոնի հանդիպակաց լանջերը զառիթափ են:

Արփայի կանյոնի աջափնյա շրջանում գերակշռում են ինտրուզիվ և հրաբխանստվածքային ապարների ծալքավոր կառույցներով չափավոր զառիթափ լանջերով (15-25^0) միջին բարձրության էռոզիոն տեղատարումային ռելիֆի ձևեր իսկ ձախափնյա շրջանում՝ միջին բարձրության էռոզիոն-տեղատարումային հրաբխածին, կարբոնատային ապարների փոքրաթեք կամ միաթեք ծալքավոր հիմքով ընդլայնական շեղակի լեռնաշղթաներ ու սարավանդներ, հրաբխածին-կարբոնատային շերտախմբերի ինտենսիվ ծալքավոր, միջին բարձրության լեռներ և արիդ տեղատարումային, խիստ մասնատված ցածր լեռներ ու սարավանդներ (նկ.5, 6):



1-ինտրուզիվ և հրաբխանստվածքային ապարների ծալքավոր կառույցներով չափավոր զառիթափ լանջերով (15-25^0) միջին բարձրության էռոզիոն տեղատարումային ռելիֆ

2-ալյուվիալ – ողողատային, տափարակ

3- հրաբխածին, կարբոնատային ապարների փոքրաթեք կամ միաթեք ծալքավոր հիմքով ընդլայնական շեղակի լեռնաշղթաներ ու սարավանդներ միջին բարձրության էռոզիոն-տեղատարումային ռելիեֆ:

4-հրաբխածին-կարբոնատային շերտախմբերի ինտենսիվ ծալքավոր, միջին բարձրության լեռներ:

5- արիդ տեղատարումային, խիստ մասնատված ցածր լեռներ, սարավանդներ

6-միաթեք լաղալեռնային սարավանդներ

7- հրաբխածին - կարբոնատային շերտախմբերի ինտենսիվ լալքավոր միջին բարձրության լեռներ

Նկ.5: ՀՀ Եղեգնաձոր-Վայք-Ջերմուկ սեգմենտի երկրաձևաբանության քարտեզ (հատված ՀՀ Ազգային Ատլասից Մ1:750000)



Նկ.6: Հատված ՀՀ լանջերի թեքությունների քարտեզից (ՀՀ Ազգային ատլասից):

4.3. Կլիմա

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտի-ները փոխվում են ըստ բարձրության (նկ.7): Շրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայա-բանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 և ՀՀՇՆ 22-01-24 փաստաթղթերից: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութա-բանական կայաններն ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի տվյալների հաշվառումով:

Ընդհանուր առմամբ տարածաշրջանում ըստ բարձրության՝ հերթափոխվում են չոր, խիստ ցամաքային, չոր ցամաքային, չափավոր ցամաքային, բարեխառն և ցուրտ լեռնային կլիմաները: Արևափայլքի տարեկան միջին տևողությունը 2400-2700 ժ է, անարև օրերի թիվը՝ 30-40: Հունվարի միջին ջերմաստիճանը -7,5 °C է: Ամենաբարձր

ջերմաստիճանը դիտվում է հուլիս-օգոստոս ամիսներին 16,3-16,5 °C: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 4,9 °C: նվազագույն բացարձակ ջերմաստիճանը գրանցվել է -30°C, իսկ առավելագույնը՝ 33,8 °C:

Նոյեմբեր – մարտ ամիսներին մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 342 մմ իսկ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ 429 մմ: Ձմռան տևողությունը 129 օր է (նոյեմբերի 20-ից մինչև մարտի 28-ը):

1-12 աղյուսակներում ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները՝ մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը, մթնոլորտային տեղումները, որոնք պետք է հաշվառվեն ներդրումային գործընթացի բոլոր փուլերում:

Աղյուսակները լրացված են ըստ «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01.-2011» և ՀՀՇՆ 22-01-24 [www.arlis.am/Annexes/7/2024_N03hav.pdf] տեղեկագրերում առկա «Ջերմուկ» օդերևութաբանական կայանի կլիմայական տվյալների:



Նկ.7: ՀՀ կլիմայական գոտիավորման սխեման:

Աղյուսակ 1.

Օդի միջին ջերմաստիճանը

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												Միջին տարեկան, °C	°C Նվազագույն, բացարձակ	Բացարձակ առավելագույն, °C
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր			
-7,5	-6	-2,1	3,7	8,8	13	16,3	16,5	12,9	6,7	0,4	-4,7	4,9	-30	33,8

Աղյուսակ 2

Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

Մ.ա/Մ.ն	Ըստ ամիսների, °C												Միջին տարեկան
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**
Մ.ա	-1,2	-0,2	3,7	9,4	15,1	19,6	23,2	24,2	20,8	13,8	6,3	0,9	11,3
Մ.ն.	-11,2	-10,2	-5,8	-0,4	3,7	7,2	10,6	10,4	6,5	1,6	-3,7	-8,4	0,0

Աղյուսակ 3

Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Օդի ջերմաստիճանը °C									
Ամենատաք օրվա միջին օրական ջերմաստիճանը		Ամենաշոգ ամսվա միջինը	Տարբեր ապահովվածությամբ (%) առավելագույն ջերմաստիճանը						Դիտարկ-ված բացարձակ առավելա-գույնը
Ապահովվածություն, %			Ապահովվածություն, %						
0,99	**0,95**		**1**	**2**	**5**	**10**	**20**	**50**	
24	24	17.0	34	34	33	32	31	30	34

Աղյուսակ 4

Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 2)

Օդի ջերմաստիճանը ^{0}C													
Օրական տատանումը								Միջին օրական առավելագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «n» տարիների ընթացքում					
Առավերագույն օրական տատանումը, որը հնարավոր է1 անգամ «n» տարիների ընթացքում						Ամենա տաք ամսվա միջին օրական տատան ումը	Ամենատաք ամսվա առավելա-գույն օրական տատա-նումը						
«n»								«n»					
2	5	10	20	50	100			2	5	10	20	50	100
19	20	21	21	22	22	13.9	21.5	21	23	23	24	24	25

Աղյուսակ 5

Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Օդի ջերմաստիճանը, ^{0}C														
Ամենացուրտ օրվա			Ամենացուրտ հնգօրյակի			Ամենա-ցուրտ ժամանակաշրջա-նի միջինը	Ամենա-ցուրտ ամիսների միջինը	Տարբեր ապահովվածութ-յամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						Դիտարկված նվազագույնը
Ապահովվա-ծություն			Ապահովվա-ծություն					Ապահովվածություն, %						
0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92			1	2	5	10	20	50	
-22	-21	-20	-18	-17	-17	-6	-8	-30	-29	-27	-26	-24	-21	-30

Աղյուսակ 6

Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 2)

Օդի ջերմաստիճանը, ^{0}C												
Օրական տատանումները							Միջին օրական նվազագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «n» տարիների ընթացքում					
Առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «n» տարիների ընթացքում						Ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը						
«n»							«n»					
2	5	10	20	50	100		2	5	10	20	50	100
18	20	21	21	22	23	9,9	-15	-18	-20	-21	-23	-24

Աղյուսակ 7

Օդի հարաբերական խոնավությունը

Օդի հարաբերական խոնավությունը, %																
Ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
74	73	72	71	70	68	66	63	63	69	72	75	70	74	64	63	49

Աղյուսակ 8

Մթնոլորտային տեղումները

Տեղումների քանակը միջին ամսական Օրական առավելագույն մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
Ըստ ամիսների												տարեկան		
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր			
65	68	85	103	97	69	43	26	27	64	57	67	771	342	429
41	83	44	58	37	49	49	39	32	63	38	51	83		

Աղյուսակ 9

Քամու հաշվարկային արագությունը

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հ Պա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը(մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում		
			25	50	100
793.1	1.6	12	21	23	25

Աղյուսակ 10

Ուժեղ քամիներով օրերի քանակը

Ամսական միջին արժեքը, օր												տարեկան
հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
0,4	1,1	1,1	1,1	1,4	1,9	2,1	1,6	0,7	0,3	0,3	0,3	12

Աղյուսակ 11

Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Տևողություն	**Հունվար**	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**	**Տարեկան**
Ժ	122	118	137	148	203	268	297	290	247	256	176	151	2413
ՕՐ	8	7	7	5	2	1	0,2	0,2	1	2	6	8	47

Աղյուսակ 12

Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ, աստիճան
(տվյալները որոշվում են յուրաքանչյուր ամսվա 15-ի կեսօրվա համար)

Հ/Հ	Աշխարհագրական լայնություն ^{0} հս.լ.	**Բարձրությունն ըստ ամիսների ^{0}**											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1.	**38**	30.7	39.0	49.7	61.6	70.7	75.3	73.6	66.3	55.3	43.7	33.7	28.8
2.	**40**	28.7	37.0	47.7	59.6	68.7	73.3	71.6	64.3	53.3	41.7	31.7	26.8
3.	**42**	26.7	35.0	45.7	57.6	66.7	71.3	69.6	62.3	51.3	39.7	29.7	24.8

4.4. Մթնոլորտային օդ

Հայցվող տեղամասում և հարակից շրջանում մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան չկա: Այն բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ – կողմից մինչև 10 հազար բնակիչ ունեցող բնակավայրերի համար առաջարկվում է վնասակար նյութերի հետևյալ ժամանակավոր ֆոնային կոնցենտրացիաները [meteomonitoring.am/page/1591]՝ փոշի՝ 0.071մգ/մ^3, ծծմբի երկօքսիդ՝ 0,006, ածխածնի օքսիդ՝ 0.8մգ/մ^3, ազոտի օքսիդ՝ 0.023մգ/մ^3:

Տեղամասի տարածքին մոտ գտնվող բնակավայրերում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները:

Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO_2 պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՍԹԿ կազմում է 0.15մգ/մ^3, միջին օրեկան ՍԹԿ՝ 0.05մգ/մ^3:

4.5. Ջրային ռեսուրսներ

Շրջանի կարևորագույն ջրագրական միավորը Արփա գետն է, որը սկիզբ է առնում Թեքսարի լեռների հորդառատ աղբյուրներից 3200 մ բարձրությունից: Ջերմուկ քաղաքից թեքում է հյուսիս-արևելք և հոսում է Շարուրի դաշտով: Վերին հոսանքում գետը դանդաղահոս է, բայց դեռ չհասած Ջերմուկին՝ դառնում է արագահոս և, ճեղքելով Վարդենիսի լեռնալանջերը, գահավիժում է անտառապատ խոր կիրճը և ընդունում է աղբյուրներից առաջացած ջրվեժը: Ջերմուկից ներքև Արփան հոսում է գալարումներով և իր ընթացքը մերթ արագ, մերթ դանդաղ շարունակում մինչև Արենի գյուղը: Ստորին հոսանքում Արփան բաժանվում է բազմաթիվ մեծ ու փոքր առուների և ամռան ամիսներին ամբողջովին օգտագործվում է դաշտերն ու այգիները ոռոգելու համար: Արաքսի մեջ է թափվում Նախիջևանի տարածքում: Ընդհանուր առմամբ հոսում է հյուսիս-արևելք-հարավ-արևմուտք ուղղությամբ (նկ.9):

Երկարություն 128 կմ է (Հայաստանում 90 կմ), ջրհավաք մակերեսը՝ մոտ 2600 կմ^2: Սնումը հիմնականում ձնանձրևային է (57%), հորդանում է ապրիլ-հունիսին, առավել չափով՝ մայիսին:

Վերին հոսանքում գտնվում են Ջերմուկ առողջարանը և համանուն ջրվեժը: Ջուրն օգտագործվում է ոռոգման և էլեկտրաէներգիա ստանալու համար: Այստեղ կառուցված են Բարձրունու, Ազատեկի և Արփի ջրհան կայանները:

1981թ. շահագործման է հանձնվել Արփա-Սևան ջրատարը, որի գլխամասում ստեղծվել է Կեչուտի ջրամբար թունելը: Արփայի վրա կառուցված են Ջերմուկի, Ազատեկի, Եղեգնաձորի և Արենիի ՀԷԿ-երը:



Հայցվող տեղամասի տեղադիրքը

Նկ. 8: ՀՀ մակերևութային ջրերի որակի քարտեզ (http://armmonitoring.am/page/17#ararat)

Վտակներից են՝ ձախ կողմից Դարբը, Գնիշիկը, աջից՝ Հերհերը, Եզեգիսը, Ելփինը: Նախիջևանի տարածքներում Արփան սնում են նրա Ջաղազուր, Յայջի և Ակոռի ոչ մեծ գետակները:

Ստորև բերվում են գետի բազմամյա միջն տարեկան հոսքի բնութագրերը, միջին տարեկան առավելագույն և նվազագույն ծախսերը (աղ.13 [17]):

Աղյուսակ 13

Արփա գետի ջրի ելքը Ջերմուկ և Արենի դիտակետերում

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաս-տացի	նորմա	%	փաս-տացի	նորմա	%	փաս-տացի	նորմա	%
Արփա	Ջերմուկ	2.88	2.75	105	2.84	2.66	107	2.58	2.58	100
Արփա	Արենի	4.93	7.30	67	5.57	8.11	69	5.91	7.55	78

Ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ- ի կողմից: Հայցվող տարածքում, «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը չունի դիտակետ: Դիտակետ կա Արփա գետի վերին հոսանքում՝ մինչև Կեչուտի ջրամբարը (83), որտեղ ըստ դիտարկումների ջրի որակը 2-րդ դասի է:

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝

«միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին՝ վատ» (5-րդ դաս, նկ.8), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին՝ վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Արենի գյուղից ներքև հատվածում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):



Նկ.9: Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները (2023թ.[17])

4.6. Հողեր

Հայցվող տեղամասի շրջանում Արփա գետի աջ և ձախ ափերի երկայնքով տարածված են շագանակագույն և մուգ շագանակագույն խճաքարային կարբոնատացված ցեմենտացված հողատեսքեր, ինչը պայմանավորված է շրջանում լայն տարածված կարբոնատային ապարների հաստվածքներով: Կեչունի ջրամբարից հարավ-արևմտյան շրջաններում տարածված են անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված հողատեսքեր:

Ամուլսարի շրջանում, Որատանի լեռնացքի և Հերհերի և եղեգիսի վերին հոսանքների շրջաններում տարածված են կրազերծված սևահողեր: Վերջիններս հարավ-արևմտյան շրջաններում եզրավորվում են անտառային դարչնագույն կրազերծված տափաստանացված հողերով:

Ջերմուկի շրջանում զարգացած են լեռնամարգագետնային, մարգագետնա-տափաստանային, դարչնագույն անտառային հողերը և սևահողերը (հողերի բնական տիպերի բաշխվածությունը՝ նկ. 10-ում):

Լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում:

Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, pH տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում:



Նկ. 10: Շրջանի հողատեսքերի սխեման (Ըստ ՀՀ Ազգային ատլասի)

1.Մուգ շագանակագույն խճաքարային տեղ- տեղ կարբոնատային ցեմենտացված
2. Շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացված
3. Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված
4. Սնահող կրազերծված խորքային կարբոնատային
5. Անտառային դարչնագույն կրազերծված տափաստանացված

Մարգագետնատափաստանային հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր:

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700 մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում:

Այս հողերը նկարագրվող երևակման շրջանում հանդես են գալիս լվացված ենթատիպով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են ստվերահայաց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը:

Սրանք բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է:

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700 մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում:

Այս հողերը նկարագրվող երևակման շրջանում հանդես են գալիս լվացված ենթատիպով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են ստվերա-

հայց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը:

Սրանք բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթուների քանակը գրեթե հավասար է: Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ:

Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է:

Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավված ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով (աղ.14):

Աղյուսակ 14

Մարգագետնային գորշ հողերի ֆիզիկա-մեխանիկական և քիմիական կազմը

Հողի տիպը և ենթատիպը	Խորություն, (սմ)	Հումուս, (%)	CO_2, (%)	Կլանված հումքերի գումարը, մ.էկվ. 100գ հողում	pH-ը ջրայինքաշվածքում
Մարգագետնային գորշ ոռոգելի	0-21	1.8	6.0	26.8	8.4
	21-43	1.6	6.3	28.0	8.4
	43-65	0.9	7.9	31.9	9.0
	65-92	0.8	6.8	22.0	9.4
	92-182	0.9	6.8	36.8	9.5

Տարածքի սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով:

Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%): Լվացված սևահողերի քիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունները բերված են ստորև աղյուսակ 21-ում:

Շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացված հողերի ենթատիպը բնութագրվում է հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով (աղ.15):

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կարբոնատային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.14-1.42գ/սմ^3- ի, տեսակարար զանգվածը՝ 2.48-2.55գ/^{3}-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.42-53.5, խոնավությունը՝ 22-18%-ի սահմաններում:

Աղյուսակ 15

Շագանակագույն հողերի ֆիզիկա-մեխանիկական և քիմիական կազմը

Հողատիպը և ենթատիպը	Խորութ.-յունը, (սմ)	Տոկոսներով			Կլանված կատիոնների ումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	CO_2	գիպս (SO_4)		
Շագանակագույն խճաքարային տեղ- տեղ կարբոնատային ցեմենտացված	0-15	1,6	1.6	0.0	31.3	7.8
	15-34	1,1	6,8	0.0	30.4	8.1
	34-73	07	17,4	0.1	29.9	80
	73-105	0,6	16.7	0.1	29.8	8.0
	105-155	0,4	18.7	0.1	26.8	8.2

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրանխոշոր կնձկային է:

Այս հողերն ունեն հիմնականում կարբոնատային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1- 1.3%), որոնք գլխավորապես ներկայացված են $CaSO_4$, $MgSO_4$ և այլ աղեր: Այս տիպի հողերին բնորոշ է հումուսի չնչին պարունակությունը (1-1.5%): Աչքի են ընկնում իրենց քարքարոտությամբ, հանդիպում են ինչպես մակերեսային, այնպես էլ թաղված և կիսաթաղված խճաքարեր: Ռելիեֆի անհարթության, նվազ բուսականության և անբարելավ ֆիզիկական հատկությունների հետևանքով այս հողերը ենթարկվում են ջրային, մասամբ էլ քամու էռոզիայի:

Հայցվող տեղամասի տարածքում հողաբուսական ծածկույթի հզորությունը 0.1-0.3մ է, միջին հզորությունը՝ 0.2մ:

Տեղամասը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 10-016-0284-0002 ծածկագրով հողամասի տարածքում, ընդ որում 10-016-0284-0002 ծածկագրով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրված է «ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲ Ընկերությանը:

Հողամասերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է իսկ գործառնականը կամ հողատեսքերը՝ արոտավայր:

Հայցվող տարածքի հողերը գտնվում են ելակետային վիճակում, չկան հողն աղտոտող աղբյուրներ:

Հայցվող տեղամասում մինչև նախատեսվող գործունեությունը իրականացնելը ռելիեֆի խախտում առկա չէ, տեղամասում չկան լցակույտեր կամ հողաբուսական շերտի պահպանման տեղամասեր:

4.7. Սեյսմիկ բնութագիրը և սողանքային երևույթներ

ՀՀ տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային սալերի բախման գոտում ինչով և պայմանավորված է տարածաշրջանի բարձր սեյսմիկականությունը:

ՀՀ տարածքում հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ գոտիները՝ Մերձքուռի, Սոմխեթ - Ղարաբաղի, Մերձսևանի, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց - Զանգեզուրի, Երևան - Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Նշված գոտիների սահմաններով են անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները: Դրանցից ամենախոշորներն են՝ Սևան-Աքերայի, Փամբակ-Սևան-Սյունիքի, Գեղամա, Գառնիի, Փարաքար – Դվինի, Միջին Արաքսյան /Երևանյան/ և այլ խզվածքայի խախտումներն ու բեկվածքները [3, 7]:

Հայցվող տեղամասի շրջանը գտնվում է Գեղամա խզվածքի հարավ-արևելյան սեգմենտի շրջանում, որից դեպի հարավ-արևմուտք անցնում է գառնու խզվածքը: Ուժեղ երկրաշարժերի էպիկենտրոնները գտնվում են հայցվող տեղամասից առնվազն 30 կմ հեռավորության վրա (նկ.11):

Սեյսմատեկտոնական տեսանկյունից հանքավայրը գտնվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում:

Համաձայն ՀՀՇՆ 20.04 - «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի (նկ. 12), նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 1-ին գոտում, որտեղ արագացման առավելագույն մեծությունը կազմում է Amax=0.3g:



Նկ. 11:ՀՀ Հյուսիսային կեսի ակտիվ խզվածքների (ա) և սեյսմիկ շրջանացման (բ) սխեմատիկ քարտեզներ (հատված Հայաստանի ազգային ատլասից):



Նկ.12: ՀՀ Տարանքի սեյսմիկ շրջանացման սխեման

Վայոց ձորի մարզում սողանքային երևույթները բավականին լայն տարածում ունեն, դրանք պայմանավորված են պլաստիկ հատկություններով օժտված նստվածքային ապարների ընդարձակ տարածումով: Հայցվող տեղամասի շրջանում է գտնվում Վայոց ձորի մարզի ամենամեծ սողանքային տարածքը, որն հայտնի է Արտավան-Ուղեձորի կամ Ուղեձորի անվամբ (Նկ.13): Սողանքային այս հսկա մարմնի որոշ սեգմենտներ ներկա պահին գտնվում են շարժման մեջ: Այս սողանքով է պայմանավորված Սարավան - Գորհայք ավտոճանապարհի հաճախակի քանդվելը:

Հայցվող տեղամասը հիշյալ սողանքային տարածքից գտնվում է առնվազն 3 կմ հեռավորության վրա: Տեղամասում իրականացվելիք երկրաբանական աշխատանքները որևէ կերպ չեն կարող ազդել սողանքի ակտիվության վրա:

Հայցվող տեղամասում սողանքային երևույթները բացակայում են, այստեղ տարածված են ժայռային ապարներ, որոնք սահքի հատկությամբ օժտված չեն: Արփա գետի կանյոնում հնարավոր են քարաթափումներ, որոնց համար նախատեսված են ինժեներական - երկրաբանական ուսումնասիրություններ:



Նկ.13: ՀՀ Վայոց ձորի մարզի սեգմենտի սողանքների քարտեզ ըստ ՀՀ Ազգային ատլասի,

4.8. Բուսական և կենդանական աշխարհ

Վայոց ձորի մարզի բուսական աշխարհի տեսակային կազմը հարուստ է: Այստեղ հաշվվում է գրեթե 1650 բուսատեսակ, որոնցից 1500 տեսակը խոտաբույսեր են, որոնց մեջ գերակշռում են դեղաբույսերը: Մարզն աղքատ է անտառներով (տարածքի 1.6% կամ 3700հա), սակայն անտառի կազմի մեջ մտնող շուրջ 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր՝ հազվագյուտ ու էնդեմիկ տեսակներ են: Դրանց մեջ կան հատուկ պահպանվող տարածքներ՝ Հերհերի գիհու նոսրանտառային և Ջերմուկի անտառային արգելավայրերը:

Վայքի ֆիզիկաաշխարհագրական շրջանում իրար են հաջորդում լանդշաֆ-տային երեք հարկեր, ցածրադիր հարկում կիսաանապատային և չոր տափաստանային լանդշաֆտներն են, որոնք տարածվում են 1200 մետրից մինչև 1700 մետր բարձրություններում: Միջնամասում գերիշխում են լեռնատափաստանային, լեռնան-տառային և մարգագետնատափաստանային լանդշաֆտները:

Ուսումնասիրվող շրջանը մտնում է Դարելեգեսի ֆլորիստիկ շրջանի մեջ (նկ.14), որտեղ տարածված են Festuca versicolor Tausch, F. ovina L., F. valesiaca Gaudin, Hordeum violaceum Boiss et Huet, Carex humilis Leys, Trifolium ambiguum և ուրիշ ֆրակցիաներ (նկ.15): Դաշտային հատվածներում հանդիպում են մարգագետնատափաստանային խմբակցություններ: Ժայռոտ հատվածներում աճում են ծորենու, մասրենու, մոշի ալոճենու թփուտներ:



Նկ. 14: Հայաստանի ֆլորիստիկ շրջանները (Таманян, Файвуш, 2009): Դարելեգիսի ֆլորիստիկ շրջանը 9-րդ է:

Վայոց ձորի մարզում աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, խաղողի, սալորի, սերկևիլի, փշատի, ընկույզի բազմաթիվ տեսակներ, բազմաթիվ հատապտուղներ:

Բնական պայմանների բազմազանությամբ է պայմանավորած նաև հարուստ կենդանական աշխարհի գոյությունը: ՀՀ–ում գրանցված 460 տեսակի կենդանիներից 225-ը հանդիպում են Վայոց ձորի մարզում: Դրանցից են բեզուարյան այծը, վայրի ոչխարը՝ (մուֆլոնը), վայրի խոզը, գորշ արջը, աղվեսը, գայլը, նապաստակը, թռչուններից՝ լորը, քարակաքավը, անգղերը, արծիվները, ձկնատեսակներից՝ կարմրախայտը, բեղլուն, կողակը: Հաճախակի հանդիպում են նաև թունավոր օձեր՝ հայկական իժ, գյուրզա: Ինչպես բույսերի, այնպես էլ կենդանիների շատ տեսակներ գրանցված են «Կարմիր գրքում»: Կենդանիների պահպանման նպատակով ստեղծվել են արգելավայրեր:



Նկ.15: Վայոց ձորի մարզի Ջերմուկ- Վայք – Եղեգնաձոր շրջանի բնական բուսածածկերի սխեմատիկ քարտեզ: 1. Տափաստանային բուսականություն, 2. կիսանապատային բուսականություն,

Բնական պայմանների բազմազանությամբ պայմանավորված մարզն ունի հարուստ կենդանական աշխարհ: Վայոց ձորն իր տեղադիրքով Միջերկրածովյան կենսաշխարհագրական տարածաշրջանի, Իրանական, Փոքրասիական ու Պոնտոս-կովկասյան կենսաբազմազանության մարզերի խաչմերուկ է: Այստեղ տարածված են Հայաստանում գրանցված 460 տեսակի կենդանիներից 225-ը:

Դրանցից են բեզոարյան այծը, հայկական լեռնային ոչխարը, վայրի խոզը, գորշ արջ, աղվեսը, գայլը, նապաստակը, թռչուններից՝ սովորական լորը, քարակաքավը, անգղները, արծիվները, ձկնատեսակներից՝ կարմրախայտը, բեղլուն, կողակը:

Հաճախակի հանդիպում են ինչպես թունավոր, այնպես էլ անվտանգ օձեր, որոնցից ամենանշանավորը լեռներում բնակվող հայկական իժն է, որը գրանցված է Հայաստանի կենդանիների «Կարմիր գրքում»:

Ինչպես ֆլորայի, այնպես էլ ֆաունայի շատ տեսակներ գտնվում են վերացման եզրին կամ ուղղակի վտանգված են՝ այդկերպ գրանցված լինելով Հայաստանի «Կարմիր գրքում»(աղ.16): Բնության պահպանության նպատակով մարզում ստեղծվել են արգելավայրեր:

Հայցվող տեղամասի շրջանում հավանական է համարվում Կարմրան ութառէջ (Tamarix octandra Bunge) և Զանգակ ազգակից Campanula propingua տեսակների առկայությունը: Բուն հայցվող տեղամասում դրանք առկա չեն(հավ.2):

Աղյուսակ 16

Վայոց Ձորի մարզի ՀՀ Կարմիր գրքում գրանցված և անհետացման եզրին գտնվող բույսերի և կենդանիների տեսակների ցանկ

Հ/Հ	Բույսեր	Կաթնասուններ	թռչուններ	Սողուններ և երկկենցաղներ
1.	Գիհի բազմապտուղ (Juniperus polycarpos)	Լայնականջ կամ ականջեղ ոզնի (Hemiechinus auritus)	Եվրոպական ճնճղաճուռակ (Accipiter brevipes)	Կանաչ դոդոշ (լատին.՝ Pseudepidalea viridis),
2.	Կապնդեղ նրբաճյուղ (Seseli leptocladum Woronow)	Հարավային պայտաքիթ (լատ.՝ Rhinolophus euryale)	Օձակեր արծիվ (լատին.՝ Circaetus gallicus),	Լճագորտ (լատին.՝ Rana ridibunda),
3.	Տերեփուկ լևզեանման (Centaurea leuzeoides)	Մեհելիի պայտաքիթ, ակնոցավոր կամ ռումինական պայտաքիթ չղջիկ (Rhinolophus mehelyi)	|Հարավ եվրոպական Aquila chrysaetos fulna	Փոքրասիական գորտ (Rana macrocnemis)
4.	Տերեփուկ ֆեոպապուսանման (Centaurea phaeopappoides)	Նատերերի արաքյան գիշերային չղջիկ (Myotis nattereri)	Նախասիական մորուքավոր արծիվ Gypaetus barbatus aureus	Կովկասյան լեռնայի ն ագամա (Laudakia caucasia)
5.	Ճուռակախոտ փրչոտ (Hieracium pannosum)	Ասիական լայնականջ չղջիկ (Barbastella leucomelas),	Սև անգղ (լատին.՝ Aegypius monachus)	Դեղնափորիկ (Pseud opus apodus), (ժող.՝ *լորտու*)
6.	Կաթնուկ թաղթաջյանի (Lactuca takhtadzhianii)	Գորշ արջ (լատին.՝ Ursus arctos)	Սպիտակագլուխ անգղ (Gyps fulvus)	բարեկազմ օձագլուխ (Ophisops elegans)
7.	Ստեպտորամֆուս Չերեպանովի (Steptorhamphus czerepanovii)	Խայտաքիս (Vormela peregusna)	Բալորան (Falco cherrug)	Ջրային լորտու (Natrix tessellata)
8.	Լվածաղիկ Կոչիի ((T. kotschyi))	Ջրասամույր, ջրաքիս (Lutra lutra),	Կանաչ մեղվակեր (Merops persicus)	Կապարագույն իժանման սահնօձ (Coluber nummifer),
9.	Գազ կարակուշի (Astragalus karakuschensis)	Անտառակատու Wild cat	արևելյան կարմրագլուխ շամփրուկը (Lanius senator niloticus)	Ոսկեգույն տրախիլեպիս (Trach ilepys auratus)
10.	Վահանակերպ տափակապատիճ ակ (Peltariopsis planisiliqua)	Ընձառյուծ, հովազ, ինձ (Panthere pardus),	Երգող շահրիկ (Silvia hortensis),	Կովկասյան կատվաձ կամ Իբեր ական կատվաձ (Telescopu s fallax),
11.	Մեխակ մանրածաղիկ (*D. parvifloarm*)	Բեզոարյան այծ, քարայծ կամ մորու քավոր այծ (Capra aegagrus),	Սևավիզ քարաթռչնակ (Oenanthe finschii)	Անդրկովկասյան սահնօձ (Zamenis hohenackeri),
12.	Վարդակուկ ոսկեգօծ	Օդի, Հայկական մուֆլոն կամ	Խայտաբղետ քարակեռնեխ (*Monticol*	Սատունինի սևագլուխ

	(Rosularia chrysantha)	անդրկովկասյան լեռնային ոչխար (*Ovis orientalis gmelini*	*a saxatilis*)	ռինխոկալամուս (լատ.՝ Rhynchocalamus melanocephalus satunini)
13.	Կուրկուրան մետաքսյա (H. sericeum)		Կապույտ քարակեռնեխ (Monticola solitarius)	Հայկական իժ (լատին.՝ Vipera raddei)
14.	Վիկ կապադոկյան Vicia cappadocica		Կապտափող սոխակ (Լատ. Luscinia svecica)	Երկարատոն սցինկ (Eumeces schneideri),
15.	Եղեսպակ Գռոսհեյմի Salvia Grossheimii		Սպիտակափող սոխակ (Irania gutturalis)	
16.	*Սբեղախոտ կրետականը (stach ys cretica)*		Ճռճհավ (Remiz pendulinus)	
17.	Սոխ ակակա (լատին.՝ Allium akaka)		Ժայռային մեծ սիտեղ (Sitta tephronota)	
18.	Տուղտավարդ Սոսնովսկու (A. sosnovskyi),		Կարմրաթև մագլցող (Tichodroma muraria)	
19.	Վայրի ցորեն (Triti cum boeoticum)		Կարճամատ ճնճղուկ, (Carpospiza brachydactyla)	
20.	Մասրենի կիսագնդաձև (Ros a haemisphaerica)		Ժայռային վարսակուկ	
21.	Ստելերոպսիս Մաղաքյանի (Stell eropsis magakjanii),			
22.	Խթանաբույս երկարածաղիկ (C entranthus longiflorus)			
23.	Կարմրան ութառէջ (Tamarix octandra Bunge)			
24.	Զանգակ ազգակից Campanula propingua			

4.9.Վտանգված էկոհամարարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմամշակութային հուշարձաններ

Ներկայացվող շրջանում են գտնվում «Ջերմուկ ջրաբանական» և «Հեր-հերի նոսրանտառային» «Ջերմուկի անտառային» պետական արգելավայրերը, հայցվող տեղամասին ամենամոտը հերհերի նոսրանտառներն են, որոնք գտնվում են մոտ 3կմ

հեռավորության վրա (նկ.15, 16):

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրը ստեղծվել է Հայաստանի Հանրա-պետության կառավարության 2009թ.-ի սեպտեմբերի 17-ի թիվ 1063-Ն որոշմամբ՝ Արփա գետի վերին հոսանքի (ծովի մակարդակից 2250-2750 մ բարձրության վրա) ջրհավաք ավազանի տարածքի բնական էկոհամակարգերի, այդ թվում՝ կենսաբազմազանության, բնության եզակի հուշարձանների և հանքային ջրերի տաք աղբյուրների սնման ավազանների պահպանության նպատակով: Այն գտնվում է Վայոց Ձորի մարզի Արփա գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի տարածքի սահմաններում՝ ակունքից մինչև եզրափակման կետը՝ «Ջերմուկ» առողջարանի հիդրոլոգիական կետը՝ ծ.մ. 1100-2800 մ բարձրության վրա:

«Հեր-հերի նոսրանտառային» պետական արգելավայրը հիմնվել է 1958 թ.-ին Արփա գետի աջափնյա վտակ Հերհեր գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1400-2000 մ բարձրության վրա գիհու ռելիկտային նոսրանտառների պահպանության նպատակով: Տարածքը կազմում է 6139 հա:

Ջերմուկի անտառային արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք, Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկը: Գտնվում է Վայոց ձորի մարզում՝ Արփա գետի վերին ավազանում՝ ծովի մակարդակից 2000-2500 մ բարձրություններում խոշորառէջ կաղնու լեռնային անտառների և հազվագյուտ կենդանիների (բեզոարյան այծ, գորշ արջ) պահպանության նպատակով: Արգելավայրը ստեղծվել է 1958թ-ին ՀՍՍՀ Մինիստրների սովետի սեպտեմբերի 13-ի N Պ-341 որոշմամբ:

Անտառային արգելավայրը զբաղեցնում է 3865.0 հա մակերես, այդ թվում՝ 1914.4 հա տափաստանային և 1950.6 հա անտառային:



Նկ. 16: ՀՀ հատուկ պահպանվող տարածքների տեղադիրքի քարտեզ

Ստորև բերվում է Վայոց ձորի մարզի բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման:

Երկրաբանական հուշարձաններ

1,	«Բլրաբերդ» հրաբխային գմբեթ	Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր-Վայք ճանապարհի աջ կողմում
2.	«Սատանայի աշտարակ» սյունաձև բազալտներ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում, գտնվում է հայցվող տեղամասից 800մ հյուսիս-արևելք
3.	«Բախտի կամար» բնական քարե թունել	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաք, Արփա գետի կիրճում
4.	«Անանուն» որմնաքանդակներ	Վայոց ձորի մարզ, Երևան-Գորիս խճուղու ձախ կողմում, Ջերմուկ տանող ճանապարհից 44 մ դեպի Գորիս
5.	«Անանուն» լավային ծալքեր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 5 կմ հվ-արլ
6.	«Վարդան Մամիկոնյան» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Կեչուտի ջրամբարից 2 կմ հվ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
7.	«Ցիցքար» ժայռագագաթ	Վայոց ձորի մարզ, Վայք քաղաքից 0.5 կմ հս-արմ
8.	«Տորք Անգեղ» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Անապատե վայրում
9.	«Սֆինքս» քարե քանդակ	Վայոց ձորի մարզ, Ագարակաձոր գյուղ, Գրավ գետի կիրճում
10.	«Սպիտակ քար» ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 3 կմ հս-արմ, Աղավնաձոր-Ելփին ճանապարհի աջ կողմում
11.	«Անանուն» տեկտոնական խախտում	Վայոց ձորի մարզ, Արենի գյուղի արլ մասում, Արփա գետի ձախ ափին
12.	«Պահակային աշտարակ», էրոզիոն ժայռ-մնացուկ	Վայոց ձորի մարզ, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին, Արփա գետի կիրճում, Գնդեվազ գյուղի դիմաց
13.	«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 1-1.5 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
14.	«Անանուն» դայկաներ	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղից 4 կմ հս-արլ, Արփա գետի կիրճում, Վայք-Ջերմուկ հին ճանապարհին
15.	«Անանուն» սյունաձև անջատմամբ բազալտներ	Վայոց ձորի մարզ, Գոմք գյուղի հս-արլ մասում, ձորակի աջ կողմում
16.	«Անանուն» դայկա	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի հվ եզրին
17.	«Անանուն» խզվածքային կառուցվածք	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղի արմ ծայրամասում
18.	«Անանուն» քարե քանդակներ	Վայոց ձորի մարզ, Խնձորուտ գյուղից 2.0 կմ հս, Ջառիթափ-Խնձորուտ ավտոճանապարհի երկու կողմում
19.	«Վայոցսար» (Դալիկ) հրաբուխ	Վայոց ձորի մարզ, Կարմրաշեն գյուղից 3.0 կմ հվ-արմ
20.	«Անանուն» լավային հոսք	Վայոց ձորի մարզ, Շատին գյուղից 0.5 կմ արլ
21.	«Անանուն» դայկայանման	Վայոց ձորի մարզ, Վերնաշեն գյուղից հս

	մարմին	
22.	«Գետիկվանքի» բրածո ֆլորա	Վայոց ձորի մարզ, Գետիկվանք գյուղից 3 կմ հս-արլ, 2240 մ բարձրության վրա
23.	«Ազատեկի» բրածո ֆլորա	Վայոց ձորի մարզ, Ազատեկ գյուղի մոտ

Ջրաերկրաբանական

1.	«Ջերմուկի» աղբյուրներ	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ առողջարանի տարածքում, ծ.մ-ից 2140 մ բարձրության վրա
2.	«Յոթաղբյուր» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից 10 կմ հս-արլ դեպի Ալ լիճ տանող ճանապարհին, Ջերմուկի հրաբխային պլատոյի վրա, ծ.մ-ից 2610 մ բարձրության վրա
3.	«Գրավի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գյուղից 5 կմ հվ, Գրավ գետի հովտում, ծ.մ-ից 1630 մ բարձրության վրա
4.	«Պարույր Սևակ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Աղավնաձոր գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 1985 մ բարձրության վրա
5.	«Արտաղբյուր» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գյուղից 2.7 կմ հս-արլ, Եղեգիս գետի աջ ափին, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
6.	«Ջրովանք» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Արփի գյուղից 3 կմ հվ-արլ, Արփա գետի ձախ վտակ Ջրովանք գետակի ակունքում, ծ.մ-ից 1345 մ բարձրության վրա
7.	«Առնետի» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Խաչիկ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1780 մ բարձրության վրա
8.	«Բազմաղբյուր» աղբյուրներ	Վայոց ձորի մարզ, Հերհեր գյուղի մոտ, ծ.մ-ից 1508 մ բարձրության վրա
9.	«Մոզ» աղբյուր	Վայոց ձորի մարզ, Մալիշկա գյուղից 2.5 կմ արլ, Արփա գետի կիրճի աջ ափին, ծ.մ-ից 1170 մ բարձրության վրա

Ջրագրական

1.	«Հովվալիճ» լիճ	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ քաղաքից մոտ 15 կմ հս, Արփա գետի աջ վտակի վերին հոսանքում
2.	«Բարձրունի» լիճ	Վայոց ձորի մարզ, Բարձրունի գյուղից 3 կմ արլ, ծ.մ-ից 2760 մ բարձրության վրա
3.	«Հայելի» լիճ	Վայոց ձորի մարզ, Արտավան գյուղից 2 կմ արլ, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
4.	«Անանուն» լիճ	Վայոց ձորի մարզ, Կապույտ գյուղից 3 կմ հվ-արլ, ծ.մ-ից 2150 մ բարձրության վրա

5.	«Սրբալիճ» լիճ	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 0,5 կմ արլ, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
6.	«Մարտիրոս» լիճ (Վերին լիճ)	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 1,5 կմ արլ, ծ.մ-ից 2145 մ բարձրության վրա
7.	«Ջերմուկ» («Ցոլք») ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Արփա գետի աջակողմյան Ջերմուկ վտակի վրա
8.	«Քարավազ» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Հերհեր գետի աջակողմյան վտակի վրա, Կարմրաշեն գյուղից 2 կմ արլ
9.	«Հերհեր» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Հերհեր գետի վրա, համանուն գյուղից 2.5 կմ հս
10.	«Գետիկվանք» ջրվեժ	Վայոց ձորի մարզ, Եղեգիս գետի աջակողմյան վտակի վրա, Վարդահովիտ գյուղից 0.5 կմ արմ

Բնապատմական

1.	«Սմբատասար» բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Արտաբույնք գյուղից 0.75 կմ արլ
2.	Պռոշաբերդի բնապատկերներ	Վայոց ձորի մարզ, Գլաձոր գյուղից 6 կմ հս
3.	«Բերդի գլուխ» ամրոցի հրվանդան	Վայոց ձորի մարզ, Գնդեվազ գյուղի հս-արմ եզրին
4.	Վարդանես լճի համալիր	Վայոց ձորի մարզ, Ելփին գյուղից 3.5-4 կմ հս-արլ, նախկին Վարդանես գյուղի ավերակների մոտ, ծ.մ-ից 1748 մ բարձրության վրա
5.	«Սուրբ Գևորգ» աղբյուրների խումբ	Վայոց ձորի մարզ, Հերհեր գյուղի հվ մասում, Հերհեր գետի աջ ափին
6.	Մարտիրոս գյուղի բնապատմական համալիր	Վայոց ձորի մարզ, Մարտիրոս գյուղից 2.0 հվ-արլ, Նզար լեռան արմ լանջին

Կենսաբանական հուշարձան

«Կորնգան եղջյուրավոր»	Վայոց ձորի մարզ, Վարդենյաց լեռնանցք, Աղնջաձոր գյուղից 3 կմ հս-արմ

5.ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

5.1. Ենթակառուցվածքներ

Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասը ՀՀ վարչատարածքային բաժանման համաձայն գտնվում է Վայոց Ձորի մարզում:

Վայոց ձորի մարզը գտնվում է ՀՀ հարավարևելյան վերջույթում: Ունի 2308 կմ^2 մակերես՝ զբաղեցնելով Հայաստանի տարածքի 7.8 %-ը, մարզկենտրոնը՝ Եղեգնաձորն է:

ՀՀ մարզերի շարքում տարածքի մեծությամբ գրավում է միջին տեղ, իսկ բնակչության թվով ամենափոքր մարզն է [19]:

Մարզը հյուսիսից սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հյուսիսարևելքից՝ ԼՂՀ-ին, հարավարևելքից՝ Սյունիքին, հարավից՝ Նախիջևանի Հանրապետությանը (Ադրբեջան), արևմուտքից՝ Արարատի մարզին:

Վայոց ձորը բնակատեղի է եղել վաղնջական ժամանակներից: Այս փաստի մասին վկայում են պեղումների ընթացքում հայտանաբերված նախամարդու իրերը, բրոնզե դարին վերաբերող դաշույնները, ճարմանդները, ապարանջանները, մատանիները և այլ իրեր: Ժայռերին հայտնաբերվել են բազում փորագրություններ, որսորդական տեսարաններով և զանազան կենդանիներով իսկ 2008 թվականին միջազգային հնագիտական արշավախմբի կողմից Վայոց ձորում կատարված նոր հայտնագործությունը ևս մեկ անգամ ապացուցեց, որ Վայոց ձորը եղել է բնակատեղի ավելի քան 5000 տարվա վաղեմությամբ:

Արշավախմբի կողմից Թռչունների քարայրում պեղումների արդյունքում հայտանաբերվել է 5500 տարվա հնության կաշվե կոշիկ՝ տրեխ: Այն ամենահին կոշիկի նմուշն է, որ երբևէ գտնվել է ամբողջ աշխարհում և այժմ գտնվում է ՀՀ պատմության թանգարանում: Քարանաձավում հայտնաբերվել են նաև ճզմած խաղողի մնացորդներ և գինու կարասների մի ամբողջ շարք (գինու արտադրամաս): Հնարավոր է, որ դա ամբողջ աշխարհում գինու արտադրության ամենահին ցիկլն է:

Հայաստանի պատմագրության մեջ Վայոց ձորն առաջին անգամ հիշատակվել է Մ. Խորենացու կողմից: Վայոց ձորով են անցել Դվին–Պարտավ և Դվին–Շաղատ միջնադարյան ճանապարհները: Սուլեմա, Քոչբեկի և այլ լեռնանցքներով կապվել է հարևան շրջանների հետ: Դեռևս մ. թ. ա. VIII դ. Վայոց ձորի ներկայիս տարածքն ընդգրկված է եղել Ուրարտական թագավորության կազմում:

Մ.թ.ա. VI դ. մտել է Երվանդունիների, մ.թ.ա. 189 թվականին՝ Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության մեջ: Մեծ Հայքի թագավորության ըստ «աշխարհների» վարչական բաժանումից հետո (Ի դ.) մտել է Սյունիքի մեջ, դարձել Սյունիների իշխանական տան ժառանգական տիրույթը:Մեծ Հայքի թագավորության անկումից հետո եղել է Հայկական մարզպանության կազմում:

451 թվականին Ավարայրի պատերազմի մասին խոսելիս հարկ է նշել նաև Վայոց ձորի տարածքում տեղի ունեցած ճակատամարտերը, որոնց մասին հիշատակվում են պատմիչներ Եղիշեի, Ստեփանոս Օրբելյանի և այլոց գործերում:

571 թվականին Սյունիքի հետ միացվել է Փայտակարան նահանգին: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Վայոց ձորը մտել է Արմինիայի կազմի մեջ: 987 թվականին Վայոց ձորը մտել է նորաստեղծ Սյունիքի թագավորության մեջ:

990-991 թվականին Հայոց թագավոր Գագիկ Ա Բագրատունին Վայոց ձորը միացրել է Անիի թագավորությանը:

1045 թվականին Վայոց ձորը եղել է Շադդադյանների գերիշխանության ներքո: XII դարի վերջին և XIII դարի սկզբին ազատագրել են հայ–վրացական զորքերը և մտցրել Զաքարյանների իշխանապետու թյան մեջ: Օրբելյանների ավատական տունը ձևավորվել է 13-րդ դ. Զաքարյանների ինքնավար իշխանության տարածքում:

Օրբելյան իշխանների օրոք այս տարածաշրջանը կտրուկ զարգացում է ապրել: Լիպարիտ առաջին Օրբելյանը պայքարելով երկրամասի ամբողջականության պահպանման համար, շինարարական մեծ աշխատանքներ է կատարել: Դրանցից ամենակարևորը 1223 թվականին Նորավանքում Սուրբ Կարապետ եկեղեցու կառուցումն է, որով հիմք դրվեց Սյունիքի հոգևոր նոր կենտրոնին:

Լիպարիտ Օրբելյանի հայրենանվեր գործը շարունակում են իր որդիներ Էլիկումը, Սմբատը, Տարսայիճը:

Օրբելյանները հայ մշակույթի հովանավորներ էին: Նրանք իրենց իշխանապետության սահմաններում համալսարաններ ու բարձրագույն դպրոցներ բացեցին, ամրոցներ, կամուրջներ, ապարանքներ ու եկեղեցիներ կառուցեցին: Իսկ Օրբելյանների մշակութային մեծագույն ձեռքբերումը, ինչ խոսք, Նորավանքի վանական համալիրն է, որտեղ գործել են անվանի ճարտարապետներ Սիրանեսն ու Մոմիկը: Սմբատ Օրբելյանը, փոխարինելով ավագ եղբորը, դառնում է իշխանաց իշխան:

Տաղանդավոր դիվանագետը, երկու անգամ լինելով մոնղոլ-թաթարական պետության մայրաքաղաքում, անձամբ բանակցություններ է վարում Մանգու խանի հետ (1251-1256 թթ): Արդյունքը լինում է այն, որ արժանանում է մեծամեծ պատիվների և վերստին հաստատվում իր տիրույթներում, ոչ միայն վերադարձնում է նվաճված տարածքները, այլև երկրի վարչական տիրույթները համալրում նորերով: Սմբատին հաջողվում է երկրում հաստատել խաղաղություն: Զարկ է տրվում շինարարական ընկրկուն աշխատանքներին, իսկ եկեղեցիները, ի շնորհիվ նրա գործադրած ջանքերի, ազատվում են հարկերից: Սմբատը վախճանվում է Դավրիժում՝ 1273 թվականին, նրա մարմինը մեծահանդես ծիսակատարությամբ տեղափոխվում է Վայոց ձոր և ամփոփվում Նորավանքի տոհմային դամբարանում: XIII դ. վերջին և XIV դ. առաջին տասնամյակներին մեծ հռչակ է ստացել Գլաձորի համալսարանը XIV դարից մինչև XV դ.1-ին կեսը արդյունավետ է գործել Հերմոնի վանքի դպրոցը: Երևան են եկել Ցախաց քար, Քարկոփի կամ Խոտակերաց, Գնդեվանք, Վերին Նորավանք, Արատեսի, Թանահատ և այլ վանական հաստատությունները, որոնք եղել են նաև կրթության և գրչության կենտրոններ: Միջնադարում Վայոց ձորի տարածքով է անցել ,Մետաքսի մեծ ճանապարհը, որով այսօր անցնում է Մարտունի- Եղեգնաձոր խճուղին: Սելիմի քարավանատունը Հայաստանում պահպանված բազմաթիվ քարավանատներից է: Դրանք դեպի Եվրոպա և Արևելք գնացող բեռնված քարավանների համար ծառայել են որպես գիշերային օթևաններ: Շատերի պատկերացմամբ Մետաքսի ճանապարհը մեկ հստակ երթուղի է, մինչդեռ, իրականում, գոյություն են ունեցել Արևելքն ու Արևմուտքը իրար կապող բազմաթիվ ճանապարհներ՝ հիմնականում ցամաքային և մասամբ էլ ծովային: Այդ ճանապարհները կամրջել են արևելքն ու արևմուտքը, հյուսիսն ու հարավը: Նախընտրելի են համարվել գետերի և լճերի հովիտներով անցնող ճանապարհները: Քարավանատները Հայաստանով անցնող Մետաքսի ճանապարհի ուղեցույցներն էին, ուր հիմնականում իջևանում էին քարավաններին ուղեկցող մարդիկ և պատսպարվում կենդանիները: Սելիմի լեռնանցքում կառուցված քարավանատունը Հայաստանի նմանօրինակ կառույցների արժեքավոր օրինակներից է:

XIV–XV դարերի հայկական ավատատիրական տների թուլացման պայմաններում, օգտվելով թուրքմենական կարակոյունլու և ակկոյունլու ցեղերի գերիշխանության հաստատումից, ինչպես նաև Լենկթեմուրի արշավանքներից, Վայոց ձոր մուտք են գործել քրդական ցեղեր, որոնք հետագայում դարձել են թրքախոս։

1555 թվականի Ամասիայի պայմանագրով Վայոց ձորը անցել է Սեֆյան Իրանին, 1590 թվականին՝ Օսմանյան սուլթանությանը։

1603 թվականին Հայաստան ներխուժած իրանական զորքերը Վայոց ձորի հայ բնակչության զգալի մասին քշել են Իրան։ Թուրք–իրանական 1639 թվականի պայմանագրով Վայոց ձորը անցել է վերջինիս։

Վարչական առումով Վայոց ձորը Նախիջևանի օլքայի կազմում ենթարկվել է Թավրիզի, իսկ XVII դ. վերջին՝ Չուխուր–Սաադի վիլայեթին։ XVIII դ. կեսին մտել է նոր կազմված Նախիջևանի խանության մեջ։

1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրով միացվել է Ռուսական կայսրությանը։ 1828–40 թվականներին մտել է Հայկական մարզի, 1840–46 թվականներին՝ Վրացա–Իմերեթական, 1846–49 թվականներին՝ Թիֆլիսի, 1849– 1917 թվականներին՝ Երևանի նահանգի կազմի մեջ. նախապես մտել է Նախիջևանի գավառի մեջ, ապա Շարուրի հետ կազմել Շարուր–Դարալագյազի գավառը։

1918–1920 թվականներին մտել է Հայաստանի Բուրժուական Հանրապետության մեջ։

1920 թվականից Հայկական ՍԱՀ կազմում է եղել։ Խորհրդային իշխանության վարչական բաժանման ժամանակ 1929-1930թթ-ից մարզի ներկայիս տարածքը բաժանված էր Եղեգնաձորի և Ազիզբեկովի (այժմ Վայք) շրջանների միջև, 1991թ. մտել է Հայաստանի անկախ Հանրապետության կազմի մեջ՝ ենթարկվելով 1995թ. վերջին վարչատարածքային բաժանմանը, որից հետո վերը նշված շրջանները միավորվեցին Վայոց ձորի մարզի մեջ:

5.2. Քաղաքներն ու գյուղերը

Վայոց ձորի մազի բնակավայրերի ընդհանուր թիվը 55 է, որից քաղաքային 3՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, գյուղական՝ 52 համայնք։ Վայոց ձորում գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումներ չկան։ Քաղաքները ևս փոքր քաղաքներ են։ Ամենախոշորը մարզկենտրոն Եղեգնաձորն է, որի բնակչության թիվը 8200 մարդ է (2009թ.)։

Քաղաքը գտնվում է Երևան–Ստեփանակերտ–Իրան միջպետական ճանապարհի վրա։ Քաղաքի հարավով հոսում է Արփա գետը, հյուսիսում քաղաքին են ձուլվում Գլաձոր և Վերնաշեն գյուղերը։ Քաղաքում աստիճանաբար ակտիվանում է մշակութային կյանքը զարգանում է կրթական ոլորտը։

Վայք և Ջերմուկ քաղաքներն ունեն մինչև 6000 բնակիչ (2022թ.)։

Վերջինս առողջարանային քաղաք է։ Այստեղ էլ կատարվում է, Ջերմուկ հանքային ջրի շշալցումն ու առաքումը։ Վայոց ձորի մարզի քաղաքային բնակչությունը կազմում է ընդհանուր բնակչության 28%, կանանց թվականակը գերազանցում է տղամարդկանց թվականակին։

5.3.Տնտեսությունը

Վայոց Ձորի մարզը ՀՀ երկրագործական շրջաններից է: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5 %-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:Բուսաբուծության մեջ աչքի են ընկնում խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Այստեղ աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, փշատի, սերկևելի սալորի կեռասի, խաղողի բազմաթիվ տեսակներ, ընկույզ և հատապտուղներ:

Արփայի հովտի ցածրադիր մասերում զբաղվում են բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, իսկ մարզի նախալեռնային գոտին համարվում է ՀՀ խաղողագործության 4 շրջաններից մեկը, որոնք հումք են հանդիսանում գինեգործության համար: Հայտնի է հատկապես «Արենի» տեսակի էնդեմիկ խաղողը, որից արտադրվում է «Արենի» գինին: Գինեգործությունն այստեղ ունի հազարամյա պատմություն:

Արդյունաբերական համալիրը լրացնում են նաև պանրագործությունը, հանքային ջրերի արտադրությունը և գինեգործությունը:

Կան նաև մի քանի փոքր ջրաէլեկտրակայաններ: Սարքաշինական գործարան՝ Եղեգնաձորում:

Մարզի տնտեսության զարգացման մեջ մեծ դեր է կատարում առողջարանային տնտեսության ենթակառուցվածքների ընդարձակումը:

Զարգացած են հանքային («Ջերմուկ») և քաղցրահամ ջրերի արտադրութ-յունները:

Զարգանում է հանքարդյունաբերությունը՝ Վայոց ձորի մարզում օգտակար հանածոների արդյունահանում իրականացվում է 1 մետաղական և մի շարք ոչ մետաղական հանքերից, ընթացքի մեջ են 2 մետաղական հանքերի շահագործման աշխատանքները:

Ամուլսարի ծրագիրը ՀՀ հանքարդյունաբերության գիգանտներից է, որի շահագործումը տնտեսական մեծ օգուտներ կարող է բերել մարզին և ՀՀ տնտե-սությանը:

Մարզում առկա պատմամշակութային հուշարձանները հանդիսանում են նպաստավոր պայմաններ զբոսաշրջության զարգացման համար: Լայնորեն ճանաչված է «Ջերմուկ» բանեղոգիական առողջարանը:

Այստեղ գործում են բազմաթիվ ժամանցի վայրեր, հիսունից ավելի առողջարաններ և հյուրանեցներ, 32 մշտական և 47 սեզոնային սննդի օբյեկտներ, 81 տնային հյուրանոցներ, 6 գինու համտեսի սրահներ:

5.4. Հողերի տնտեսական յուրացման բնութագիրը

Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասը գտնվում է Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական սահմաններ-ում, մարզկենտրոնից 35 կմ արևելք, Արփա գետի ձախակողմյան սարավանդի վրա՝

Երևան - Ջերմուկ խճուղու ձախ կողմում, ծովի մակարդակից 1850 մետր բարձրության վրա: Մոտակա քաղաքը Ջերմուկն է, որից հեռավորությունը 12 կմ է:

2023 թ.-ի տվյալներով գյուղն ունի 990 բնակիչ և հանդիսանում է այդ տարածքի հնագույն բնակավայրերից մեկը:

Գնդեվազը պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառի հնագույն բնակավայրերից է: Մեզ հասած առաջին գրավոր հիշատակությունը Սիսական տան մեծ պատմիչ Ստեփանոս Օրբելյանն է, ուր ասվում է, որ Սյունաց Սոփի իշխանուհին Վայոց ձորի Գնդեվանք եկեղեցին կառուցելու հետ (936 թ.) հիմնել է նաև համանուն գյուղը և նվիրել վանքին: Չնայած պատմիչի այս տեղեկությանը՝ տարածքի պատմամշակութային որոշ հուշարձաններ թույլ են տալիս պնդելու, որ բնակավայրը շատ ավելի հին է:

Պատմական հնություններից են Գնդեվազում գտնվող Սբ. Աստվածածին քարաշեն եկեղեցին (1686 թ.) և 11-րդ դարի ջրանցքը:

Գնդեվազի ջրանցքը կառուցվել է 1008 թ, Սյունաց Վասակ թագավորի ժամանակ: Վանքի վանահայր Սարգիսը Դիտավոր լեռան վրայից Ձկնարած գետի ակունքից ջուր է բերել տալիս: Ջրանցքի երկարությունը 22 կմ է: Այն ժամանակներում ջրանցքի ջրով ոռոգվել են մոտ 400 հա վանքապատկան հողեր, այժմ՝ մոտ 1000 հա: Գնդեվազի այժմյան վարչական տարածքում պահպանվել են պատմական մի քանի բնակատեղիների ավերակներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր է:

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 19-րդ դարի առաջին կեսին Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից Վայոց ձորի Խաչիկ, Գնիշիկ, Արենի գյուղերում վերաբնակված, ապա մասամբ Գնդեվազ տեղափոխված բնակիչ-ների սերունդներն են: Մի քանի տոհմերի նախնիներ ներգաղթել են 20-րդ դարի սկզբներին այլ տեղերից:

Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը:

Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 377հա: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են, դրանք զբաղեցնում են ողջ մակերեսի 50%: Համայնքի հողերը օգտագործվում են գլխավորապես վարելահողեր զբաղեցնելով 234հա:

Պտղատու և խաղողի այգիները փոքր տարածք են զբաղեցնում՝ 3.5 հա: Զբաղվում են են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ:

Մշակում են ջերմասեր բանջարաբոստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ:

Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ:

Աշխատանքների պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայման-ները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է սեփականաշնորհված վարելահողերի և տնամերձ հողամասերի մշակումից, թոշակների և նպաստների ստացումից: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը ինտեն-սիվ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելն է, ջերմոցային տնտեսությունների ստեղծումը և հանքարդյունաբերությունը:

Համայնքը կենտրոնին կապող միջհամայնքային ճանապարհներըհիմնականում ասֆալտապատ է, տեղ տեղ կապիտալ վերանորեգման կարիք է զգացվում:

Համայնքում տեղադրված են ճանապարհային երթևեկության նշաններ: Համայնքի ներսում ավտոկանգառներ կան: Համայնքում տարածքով անցնում է ավտոբուս: Միջհամայնքային, ներհամայնքային և միջպետական ճանապարհները անցանելի են և գտնվում են բավարար վիճակում

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նշանակության հողերով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են Ջերմուկ համայնքում համայնքի ղեկավարի նստավայրում: Քննարկվել է նախատեսվող աշխատանքների մեթոդներն ու ծավալները, սոցիալական ծրագրերին ընկերության մասնակցությունը:

Ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կցված են հանրային քննարկումների արձանագրությունն և տեսաձայնագրությունը:

5.5.Պատմության, մշակութային հուշարձաններ

Ստորև ներկայացվում է Գնդեվազի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից (ՀՀ կառավարության 17.06.2003թ. N754-Ն որոշում):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Ամրոց «Բերդի գլուխ»	մ.թ.ա. 3 հզ - մջնդ	հս-ամ մասում	գյուղի եզրին, Արփայի կիրճին նայող բարձր հրվանդանին
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ		ամրոցից 200-300 մ հս-աե, Սբ. Խաչ մատուռից հս պահպանվել է 3 կղզյակներով
Գերեզմանոց	13-17 դդ.	կնտ	Սբ. Աստվածածին եկեղեցուց 250 մ աե
Խաչքար	13-14 դդ.		ընկած գետնին
Խաչքար Դավթի	14 դ.		կանգնեցված պատվանդանին
Գերեզմանոց	19-20 դդ.	հվ-աե մասում	Ջերմուկ տանող ավտոխճուղու ձախ կողմում
Գյուղատեղի «Մամարզա»	13-19 դդ.	5 կմ հվ-աե	
Գյուղատեղի «Արծաթավան» («Գյումաշխանե»)	9-14 դդ., 19-20 դդ.	4 կմ հվ-աե	տարածվում է 2 բլրալանջերին
Գերեզմանոց	9-14 դդ.		գյուղատեղիի աե եզրին

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
Խաչքար	10 դ.		ընկած գետնին, վերին կեսը չի պահպանվել
Խաչքար	10 դ.		խրված հողի մեջ
Խաչքար	10-11 դդ.		ընկած գետնին, վերնամասը չի պահպանվել, արձանագիր
Խաչքար	11 դ.		խրված հողի մեջ, վերնամասը չի պահպանվել
Խաչքար Թավրեզի	12-13 դդ.		ընկած գետնին, վերնամասը չի պահպանվել
Խաչքար Գոհարի և Բեկի	1309 թ.		ընկած գետնին պատվիրատու՝ Գրիգոր
Խաչքար Վիրապշատի	1320 թ.		կանգնեցված պատվանդանին
Խաչքար	1446 թ.		ընկած գետնին, ձախ եզրը ջարդոտված
Խաչքար Ուսաթի, Թաղումի, Էլիճանի	16-17-րդ դդ.		ագուցված թիվ 2 հանքամիջանցքին
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ	2,5 կմ հվ	Վայք - Գնդեվազ ավտոխճուղու ոլորանի շրջակայքում պահպանվել է 3 կղզյակներով
Եկեղեցի	17-18 դդ.	ամ մասում	Սբ. Աստվածածին տանող գյուղամիջյան ճանապարհի ձախ կողմում, ավերակ
Ջիթհան	19 դ.		կցվել է եկեղեցու ամ պատին
Եկեղեցի Սբ. Աստվածածին	1686 թ.	հս-ամ մասում	«Բերդի գլուխ» ամրոցից 150 մ աե պատվիրատու՝ Պետրոս վարդապետ
Խաչքար	10 դ.		հենած հվ պատին, եզրերը ջարդոտված
Խաչքար	9-10 դդ.	գ. մ.	Երազիկ Հակոբյանի տան մոտ, կանգնեցված
Խաչքար	11 դ.	գ. մ.	խանութի մոտ, կանգնեցված
Խաչքար Կարապետ երեցի	1322 թ.	գ. մ.	խանութի մոտ, կանգնեցված
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1960 թ.	գ. մ.	
Ջիթհան	18-19 դդ.	գ. մ.	
Խաչքար	11 դ.		կանգնեցված, քիվը ջարդոտված
Մատուռ Սբ. Խաչ	14-15 դդ., 20 դ.	հս	հս եզրին, բարձունքին

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
		մասում	
Վանական համալիր «Գնդեվանք»39°45′32″ հս. լ. 45°36′38″ ավ. ե.	10-17 դդ.	1 կմ ամ	Արփա գետի կիրճում, գետի ձախ ափին, Վայք - Ջերմուկ հին ճանապարհի աջ կողմում
Եկեղեցի Սբ. Աստվածածին	936 թ.		պատվիրատու՝ իշխանուհի Սոփի վրկնգ.՝ 1309 թ., 1691 թ., 1965-1970 թթ.
Խաչքար	10-11 դդ.		ագուցված հվ մուտքից ձախ, վերին և ստորին ձախ անկյունները կոտրված
Խաչքար	10-11 դդ.		ագուցված ամ պատին, արտաքուստ
Խաչքար	1035 թ.		խորանում
Խաչքար	12-13 դդ.		հենած ամ պատին, ստորին մասը կոտրված
Խաչքար	14 դ.		ագուցված ամ պատին, արտաքուստ, արձանագիր
Խաչքար Ներսեսի	16 դ.		ներսում, հվ խորշի մեջ
Խաչքար	1573 թ.		ագուցված ամ մուտքից վեր, կազմող՝ Ղարտաշ
Խաչքար	1573 թ.		ագուցված ամ մուտքից վեր կազմող՝ Ղարտաշ
Գավիթ	999 թ.		պատվիրատու՝ Քրիստափոր վանահայր վրկնգ.՝ 1309 թ., 1691 թ., 1965-1970 թթ.
Խաչքար	10 դ.		ներսում, խորշի մեջ
Խաչքար	10 դ.		հենած ամ պատին, ստորին մասը կոտրված
Խաչքար	10 դ.		հենած հվ պատին
Խաչքար	10-11 դդ.		հենած հվ պատին, ստորին աջ անկյունը կոտրված արձանագիր
Խաչքար	13-14 դդ.		ագուցված ամ պատին, մուտքից աջ
Խաչքար՝ Ավագի, ծնողաց և Խոցադեղի	1437 թ.		հենած հվ պատին, երկատված
Խաչքար	15 դ.		ագուցված ամ պատին
Խաչքար	1551 թ.		գավթի ներսում
Սեղանատուն	1691 թ.		կից վանքի հվ պարսպին

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
			պատվիրատու՝ Պետրոս վարդապետ
Տնտեսական շինություններ	17 դ.		կից վանքի հվ և ամ պարիսպներին
Խաչքար	10 դ.		ագուցված հվ պատին, ներքուստ, արձանագիր
Խաչքար	10-11 դդ.		ագուցված պատին, արտաքուստ, ստորին մասը կոտրված
Խաչքար	11 դ.		ագուցված հս պատին, արտաքուստ
Խաչքար Ուբախի	11-12 դդ.		ագուցված հվ պատին, ներքուստ
Խաչքար Թավրիզի	16 դ.		ագուցված աե պատին, ներքուստ
Խաչքար Մեսրոպի	1573 թ.		ագուցված պատին, արտաքուստ
Խաչքար	1573 թ.		ագուցված հս պատին, արտաքուստ պատվիրատու՝ Մալի
Պարիսպ	1691 թ.		պատվիրատու՝ Պետրոս վարդապետ
Խաչքար	9 դ.		բակում, կանգնեցված գետնին
Խաչքար	9-10 դդ.		բակում, եկեղեցուց ամ, ստորին մասը կոտրված
Խաչքար	9-10 դդ.		հենած եկեղեցու հվ պատին, արտաքուստ, վերնամասը չի պահպանվել
Խաչքար Սարգս և Գրիգոր քահանաների	10 դ.		հենած եկեղեցու հվ պատին, արտաքուստ
Խաչքար հայր Սուփանի	937 թ.		բակում, եռատված
Խաչքար Փաշի	10-11 դդ.		բակում, եկեղեցուց աե, զույգ խաչքարերից ձախակողմյանը
Խաչքար	10-11 դդ.		բակում, եկեղեցուց 20 մ աե, ընկած գետնին, արձանագիր
Խաչքար	11 դ.		բակում, հենած եկեղեցու հվ պատին, վերնամասը չի պահպանվել
Խաչքար	12-13 դդ.		բակում, հենած եկեղեցու ամ պատին, մուտքից աջ, զույգ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	հավելյալ նշումներ
			խաչքարերից ձախակողմյանը, արձանագիր
Խաչքար	1551 թ.		բակում, եկեղեցու ամ պատի մոտ, մուտքից ձախ
Խաչքար Խանի	1611 թթ.		բակում, կանգնեցված գետնին
Տապանաքար	15-16 դդ.		բակի ամ կողմում
Տապանաքար	1567 թ.		բակում, գավթի հվ ճակատի հանդիպակաց հատվածում

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայցվող տեղամասում ինչպես արդեն նշվել է աշխատանքային ծրագրում նախատեսվում է կատարել միայն հորատման աշխատանքներ, որոնց տևողությունը 7-8 օր է: Այս ընթացքում հնարավոր են աննշան ազդեցություններ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների և կենսաբազմազանության վրա:

6.1. Մթնոլորտային օդ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցները դառնալու է գազերի և փոշու արտանետման աղբյուր, որոնք կարճատև են լինելու և գնահատվում են աննշան:

Մակաբացման ապարների կամ լեռնային զանգվածի կուտակումներ երևակման տարածքում չեն առաջանալու:

Հորերի անցման ընթացքում փոշի չի առաջանալու, քանի որ ավազների խոնավությունը բավականին բարձր է: Փոշեգոյացում կլինի միայն երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների վրա: Փոշենստեցման նպատակով կիրականացվի ջրցանում: Անհրաժեշտ ջուրը կվերցվի ընկերության բազայից, քանի որ ընկերությունը «Վեոլա Ջուր» Ընկերության բաժանորդ է:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ) համապատասխանաբար կազմում են 5մգ/մ^3, 0.2մգ/մ^3, 0.15մգ/մ^3 և 0.5մգ/մ^3:

Նախնական հաշվարկների համաձայն, աշխատանքները սպասարկող մեքենաների տեղաշարժի հետևանքով գոյացող արտանետումները չեն գերազանցելու սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ):

6.2. Հողային ծածկույթ

Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետախուզական հորերով: Հորերի հատույթի չափերը նախատեսված է 2մx0,8մ=1,6մ^2 այնպես, որ հնարավոր լինի հորի ներսում կատարել փաստագրում և նմուշառում:

Տեղամասում 6 հետախուզական հորերի անցման ժամանակ խախտվելու է 6x1.6մ^2=9.6մ^2 հողային ծածկույթ:

Յուրաքանչյուր հետախուզական հորից հանվելու է 1,6x4=6.4մ^3 լեռնային զանգված: Բոլոր 6 հետախուզահորերից դուս բերվող լեռնային զանգվածի ծավալը կկազմի՝ 6x6.4=38.4մ^3, որից հեղաբուսական շերտի քանակը հաշվարկվում է 1,6x6x0.2=1,92մ^3 իսկ լեռնային զանգվածինը՝ 38.4-1.92 = 36.18մ^3: Հետախուզական հորերի անցման ժամանակ հողաբուսական շերտն ու ավազը կկուտակվեն հորի անմիջապես հարևանությամբ առանձին: Փաստագրումից և նմուշառումից հետո հորերը լցվում են ավազով և ապա ծածկվում հեղաբուսական շերտով:

Հողային ռեսուրսներն հասցվող վնասը գնահատվում է աննշան:

6.3. Ջրային ռեսուրսներ

Հայցվող տեղամասը անմիջական կապ ունի Արփա գետի ալյուվիալ նստվածքների հետ: Հայցվող տեղամասի սահմանի ամենամոտ կետը գետից գտնվում է 33մ հեռավորության վրա:

Գետի վրա հետախուզահորերի անցման աշխատանքները բացասական ազդեցություն չեն ունենալու, քանի որ աշխատանքների ընթացքում որևէ քիմիական նյութ չի օգտագործվելու և արտահոսքեր չեն լինելու:

Ստորերկրյա ջրերի մակարդակը գտնվում է 100-150 և ավելի մետր խորությունների վրա, որոնց վրա հետախուզական հորերի անցումը ազդեցություն չի կարող ունենալ:

6.4. Բուսական և կենդանական աշխարհ

Հայցվող տեղամասը բանուկ է, տեղամասի եզրագծից մոտ 40 հեռավորության վրա անցնում է գրունտե ճանապարհը, որտեղ մշտապես առկա է աղմուկ և թրթռում (նկ.17):

Երկրաբանական-հետախուզական աշխատանքներով հողի շերտի հեռացում չի նախատեսվում, ուստի բուսական աշխարհի և կենդանիների կամ թռչունների բների կամ թաքստոցների քանդում տեղի չի ունենալու (չնայած դրանք առկա չեն):

Խոշոր կաթնասունների ապրելավայրեր տարածքում չկան, չեն արձանագրվել Բույսերի և Կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, հետևաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ազդեցությունը տարածքի կենսաբազմազանության վրա լինելու է մի քանի օր և աննշան (աղ.14):

Կարմիր գրքային Campanula propinqua Fisch տեսակը գտնվում է հայցվող տեղամասից 3,2կմ հեռավորության վրա (նկ.18):

Հետախուզահորեը տեղադրվել են այնպես, որ հողային աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն չառաջանա և հնարավորինս չվնասվեն տեղամասի թփուտները: Նախատեսվող փորվածքների հեռավորությունները Արփա գետից 33,0-33,1մ է: Աշխատանքները չեն կարող ազդել, ո՛չ կենդանական ու բուսական աշխարհի և ո՛չ էլ Արփա գետի էկոհամակարգի վրա:



Նկ. 17: Հայցվող տեղամասի, հարակից տեղամասերի, Արփա գետի, նախատեսով հետախուզական փորվածքների և տեղամասում առկա թփերի տեղադիրքի սխեման:



Նկ. 18: Հայցվող տեղամասի և կարմիրգրքային Campanula propinqua Fisch *տեսակի արեալի տեղադիրքի սխեման: Սխեման կազմված է ըստ* https://www.gbif.org/species/5411366 *տվյալների*

6.5. Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով

Տեղամասում իրականացվելիք երկրաբանական աշխատանքների ժամանակ ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու, քանի որ հետախուզահորերի բացումը և լցնումը տևելու է ընդամենը մի քանի ժամ: Տեղամասում քսայուղեր կամ վառելիքի պահում նախատեսված չէ:

6.5.1. Կենցաղային աղբ

Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն: Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն: Մեկ մարդու համար սահմանված նորման 0,3 մ^3 (0,25տ/մ^3) /տարի է: Տեղամասում մշտապես աշխատելու են չորս մարդ, որոնք արտադրելու են օրեկան 1կգ աղբ, 10 օրում աղբի քանակը կլինի 10կգ:

Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

Այս թափոնները կտեղափոխվեն համայնքի մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար Կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են շրջանի աղբավայր: Հետևաբար այս թափոնները շրջակա միջավայրի և մարդկանց առաղջության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ դրանք գտնվում են մոտ 3կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքում հաշվառված չեն բնության հուշարձաններ:

Պատմամշակութային հուշարձաններ ավազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում չկան, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակության ժառանգությանօբյեկտների վրա:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը (աղ. 17).

Աղյուսակ 17

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ	
	սարքավորումների և անձնակազմի տեղափոխման ընթացքում	Հորատման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև	ցածր կարճատև
Ջրեր	-	-
Հողեր	ցածր կարճատև	ցածր կարճատև
Կենսաբազմազանություն	աննշան	աննշան
Պատմամշակութային հուշարձաններ	-	- -

6.6. Սոցիալական ազդեցության գնահատականը

Հետախուզական աշխատանքներն ամբողջությամբ ըստ ժամանակացույցի իրականացվելու են երկու եռամսյակ (սկիզբը 2024թ երրորդ եռամսյակից): Դաշտային աշխատանքներ ամբողջությամբ (հետախուզահորերի անցումը ներառյալ) նախատեսված է կատարել երրորդ և չորրորդ եռամսյակներում: Կատարվելու են միայն հետախուզական հորերի անցման աշխատանքներ, որոնց ընդհանուր երկարությունը ըստ ծրագրի կազմելու է մինչև 24զծ.մ:

Աշխատանքների տևողությունը նախատեսվում է մինչև 7-10 օր: Հետախուզահորերի անցումը և լցնումը կատարվալու է մի քանի ժամերի ընթացքում: Վառելիքը մատակարարվելու է ընկերության բազայից (Վայք քաղաքից): Տեղամասում յուղերի կամ վառելիքի պահում չի նախատեսվում:

Այս ընթացքում տեղամասում աշխատելու է մեկ էքսկավատոր (7-8 ժամ) և մեկ մարդատար ավտոմեքենա: Տեխնիկական միջոցների առկայության վերաբերյալ տվյալները բերված են տեխնիկական կարողությունների ու միջոցների առկայության մասին N Ձև 3 տեղեկանքում, որին կցված են տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագրի ու ծառայությունների մատուցման պայմանագրի պատճեն: Ծառայություններն իրականացվելու են պայմանագրային հիմունքներով:

Բոլոր տեսակի աշխատանքները նախատեսվում է կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փաստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան:

Աշխատանքների ընթացքում պահպանվելու է ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. Սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

Աշխատողների համար ստեղծվելու են աշխատանքային և կենցաղային պայմաններ: Բուն դաշտային աշխատանքների տևողությունը մինչև 7-10 օր է (ծրագրով նախատեսված բոլոր դաշտային աշխատանքները միասին): Այդ ընթացքում դաշտում մշտապես (աշխատանքային ժամերին) լինելու են միջինը երեք մարդ:

Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Տեղամասում տեղադրվելու է անհրաժեշտ կահավորումներով վագոն – տնակ: Աշխատանքներն ավարտելիս դա կտեղափոխվի:

Աշխատակիցների օրեկան ջրի պահանջը ըստ նորմաների կազմում է 25լ երեք հոգու համար օրեկան կպահանջվի 75 լ ջուր, 10 օրվա համար անհրաժեշտ կլինի 750լ ջուր, որը կվերցվի ընկերության ջրամատակարարման ցանցից: Ընկերությունը «Վեոլա ջուր» կազմակերպության բաժանորդ է: Բոլոր դեպքերում ջրի խնդիր հետախուզական աշխատանքների ընթացքում չի առաջանալու:

Հետախուզահորերից լեռնային զանգվածի դուրս բերումը փոշի չի առաջացնելու, քանի որ գտնվում է խոնավ վիճակում: Հետախուզահորերի անցումը տևելու է ընդամենը մի քանի ժամ, որից հետո տրամսպորտային և տեխնիկական միջոցները տեղմասից հեռացվելու են: Ջրցանման անհրաժեշտություն չի առաջանալու: Դաշտային աշխատանքները կշարունակվեն առանց տեխնիկական միջոցների: Իրականացվելու է երկրաբանական երթուղիներ:

Կեղտաջրերը հավաքվելու են հորատիպ զուգարանում, որը աշխատանքներն ավարտելուց հետո մաքրվելու է Ջերմուկ քաղաքի քաղաքաշինության և կոմունալ

ծառայության կողմից: Աշխատանքներն կարճատև են ուստի երկարաժամկետ միջոցառումներ չեն նախատեսվում:

Աշխատատեղերում, հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը կապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Անվտանգության սարքավորումների օգտագործումը կուսուցանվի, կվերահսկվի և կպարտադրվի:

Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները կունենան համապատասխան խլացուցիչներ:

Բոլոր աշխատակիցները կապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Աշխատանքների կազմակերպման արդյունքում բնակչության տարհանման խնդիր չի առաջանալու:

Ընկերության ներկայացուցիչները պատրաստ են պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲ ընկերությունը նախատեսում է Գնդեվազի բնակավայրի բյուջե մինչև թույլտվության ավարտը միանվագ փոխանցել 100.000 ՀՀ դրամ:

6.7.Աղմուկ

Տեղամասում հետախուզական աշխատանքներ իրականացնելիս աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ այն տեխնիկական միջոցներից, որոնք կոգտագործվեն հետախուզական հորերի անցման և անձնակազմի ու բեռների տեղափոխման ժամանակ: Դրանք բոլորը լինելու են կարճաժամկետ և ցերեկային ժամերին, աղմուկի ինտենսիվությունն ու մակարդակը շատ ցածր է լինելու:

Հայաստանի օրենսդրության և ՄՖԿ-ի միջազգային ստանդարտ ուղեցույցների համաձայն արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95 դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80 դԲԱ:

Հետախուզահորերի բացման ժամանակ առաջացող աղմուկը բարձր է (75-85դԲԱ) քան բնակավայրերի համար սահմանված չափաքանակները (45դԲԱ), այդուհանդերձ մի շարք գործոններով պայմանավորված աղմուկի ձայնային մակարդակը երկրաչափական պրոգրեսիայով նվազում է աղմուկի աղբյուրից աճող հեռավորության հետ և ռելիեֆի ձևաբանությունից կախված:

Նախատեսվող գործունեությունից առաջացող աղմուկի հնարավոր ազդեցությունը կրող միակ բնակավայրը Գնդեվազն է, որի ամենամոտ բնակելի տունը հեռու է 5.8 կմ:

Աղմուկի ազդեցությունը Գնդեվազ բնակավայրի ամենամոտ բնակելի տան մոտ գնահատվում է հետևյալ կերպ.

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = Laէկվ - ΔLahեռ - ΔLaէկր - ΔLAկանաչ բանաձևով, որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=85դԲԱ,

ΔLAhեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված (5.8կմ), ΔLAhեռ կազմում է 15դԲԱ,

ΔLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածքից մինչև Լուկաշին ընկած հեռավորությունը),

ΔLAէկր =20դԲԱ,

ΔLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով,

ΔLAկանաչ=5դԲԱ:

Աղմուկի մակարդակը լուկաշին բնակավայրի սահմանին կկազմի՝

Laտար = Laէկվ - ΔLahեռ - ΔLaէկր -ΔLaկանաչ = 85 – 15– 20 – 5 = 45դԲԱ (նորման 45դԲԱ):

Գիշերային ժամերին աշխատանքներ չեն կատարվելու: Աղմուկի մակարդակը Գնդեվազ բնակավայրի ամենավերջին բնակելի տան մոտ ցերեկային ժամերին ձայնի մակարդակը կլինի 45 դԲԱ:

Աղմուկի աղբյուրից 5.8 կմ հեռավորության վրա գտնվող մարդու վրա (ամենամոտը Գնդեվազ բնակավայրն է) աղմուկը չի կարող բացասաբար ազդել, քանի որ գործողությունները չեն կարող լսելի լինել այդքան մեծ հեռավորությունից:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հետախուզահորերը բացվելու և լցվելու են մի քանի ժամվա ընթացքում:

Հորերի բացման աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի կարճաժամկետ մեխանիկական թրթռում (վիբրացիա), որը կապված է էքսկավատորի աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չի գերազանցելու 115դ ԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

6.8. Սանիտարա-պաշտպանիչ գոտի

Համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թ. Փետրվարի 1-ի 06-Ն հրամանի տեղամասում իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրությունների համար սանիտարա-պաշտպանիչ գոտի չի սահմանվում:

Մոտակա բնակավայրը՝ գնդեվազը գտնվում է 5,8կմ հեռավորության վրա, ուստի հատուկ միջոցառումներ չեն նախատեսվում:

7.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում կամ «ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲ ընկերության արտադրական տարածքում:
- Փոշենստեցման նպատակով տեղամասին մոտեցնող ճանապարհի ջրցանում: Տեխնիկական նպատակներով անհրաժեշտ ջուրը տեղափոխվելու է մոտակա բնակավայրերից ցիստեռնով: Ըստ գործող նորմատիվների՝ 1մ^2 տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կորոշվի օրական կտրվածքով՝ կախված աշխատանքների վայրից, ծավալից, եղանակային պայմաններից:
- Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում բեռնակղային տիպի վագոն-տնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ: Ջրցողարանի տեղադրում չի նախատեսվում՝ հաշվի առնելով ծրագրավորվող աշխատանքների փոքր ծավալները և կարճ տևողությունը: Աշխատակիցների կենցաղային անհրաժեշտ պայմանների ապահովման համար հարակից բնակավայրում վարձակալվելու է բնակելի տուն:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքերով:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում և մոտակա աղբանոց տեղափոխում:
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն: Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում ՀՀ բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Երկրաբանական աշխատանքների ընթացքում կենդանական աշխարհի ներկայացուցիչների կա՛մ դրանց բների կա՛մ կենսագործունեության հետքերի հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքներն ու իրազեկել համապատասխան կառույցներին:

- տեղամասին և հարակից տարածքներին բնորոշ կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչների վերաբերյալ անհրաժեշտ է իրազեկել աշխատակիցներին
- արգելվում է որսը:

Աշխատանքների ընթացքում կենդանական և բուսական աշխարհի պահպանության միջոցառումների ֆինանսական ծախսերն իրականացվելու են ընկերության միջոցներով:

7.1. Խախտված հողերի վերականգնում

Տեղամասում ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Ռելիեֆի բնականոն վիճակի խախտում նախատեսված է միայն հետախուզահորերի տեղում՝ հորերի հատույթի չափով: Յուրաքանչյուր հորի հատույթի չափը նախատեսված է 2մx0,8մ=1,6մ^2: Բոլոր 6 հետախուզական հորերի անցման ժամանակ խախտվելու է 6x1.6մ^2=9.6մ^2 ռելիեֆի մակերևույթ:

Յուրաքանչյուր հետախուզական հորից հանվելու է 1,6x4=6.4մ^3 լեռնային զանգված: Բոլոր 6 հետախուզահորերից դուս բերվող լեռնային զանգվածի ծավալը կկազմի՝ 6x6.4=38.4մ^3, որից հեղաբուսական շերտի քանակը հաշվարկվում է

1,6x6x0.2=1,92մ³ իսկ լեռնային զանգվածինը՝ 38,4-1,92= 36.48 մ³:

Բոլոր հետախուզահորերը նմուշարկումից հետո կրկին լցվելու են նույն լեռնային զանգվածով իսկ հողաբուսական շերտով կիրականացվի ռեկուլտիվացում (այդ թվում կենսաբանական), որի համար նախատեսված է ծախսել 100. հազ. ՀՀ դրամ:

8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

Ա. Արտաքին երկրաբանական երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակներ՝

Հայցվող տեղամասը հարում է Արփա գետի կանյոնին: Հատակը հարթ է, հանդիպակաց լանջերը զառիթափ են: Սողանքներ առկա չեն, սակայն քարաթավումների հավանականությունը մեծ է: Երկրաբանական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ինժեներական – երկրաբանական ուսումնասիրություններ, լանջերի կայունության չափը որոշելու նպատակով: Աշխատանքային հրապարակում տեղադրել համապատասխան ցուցանակներ:

Բ. Երկրաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ հայցվող տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ^2 գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նպատակով նախատեսվում է աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ տեղամասում աշխատող անձնակազմը պարտավոր է.

անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,

հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,

դուրս գալ վագոն-տնակից,

կանգնել բացօթյա տարածքում,

կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,

կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,

ապահովել աշխատակիցների տարհանումը,

ապահովել առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքի առկայությունը:

Գ. Արփա գետի վարարման հետ կապված արտակարգ իրավիճակներ

Տեղամասի տարածքում արտակարգ իրավիճակները կարող են կապված լինեն Արփա գետի վարարման հետ, չնայած ծրագրով նախատեսված է աշխատանքներն իրականացվելու են երրորդ եռամսյակի՝ սեպտեմբեր ամսվա ընթացքում, երբ վարարումների հավանականությունը զերոյական է:

Համաձայն գետի բազմամյա դիտարկման տվյալների՝ Արփայի վարարման շրջանը տևում է մոտ 2,5 ամիս՝ ապրիլ- հունիս ժամանակահատվածում:

Դ.Պատերազմներ

Քանի որ տարածաշրջանը սահմանամերձ է ուստի հնարավոր են ռազմական բախումներ և ագրեսիա հարևան պետության կողմից: Ելնելով այդ հանգամանքից նախատեսված է կանյոնի բնական խոռոչներն օգտագործել որպես թաքստոցներ:

Նման իրավիճակներ տեղի ունենալու պարագայում հետևել քաղաքցիական պաշտպանության միասնական հրահանգավորմանը:

Ե. Հրդեհներ

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Վագոն-տնակում հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

Երևակման տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,

օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,

անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,

աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

ա.մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ շաբաթը մեկ անգամ,

բ.Հողային ծածկույթի մոնիթորինգ՝ դաշտային աշխատանքները սկեսելուց առաջ և հետո:

գ. Արփա գետի ջրերի որակի մշտադիտարկում, աշխատանքները սկսելուց առաջ և հետո:

դ. Տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտա-

դիտարկումների աղյուսակը (աղ.18):

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Կենսաբազմազնության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Վերոհիշյալ գործողություններն իրականացնելու համար ընկերությունը նախատեսվում է ծախսել տարեկան 200 հազ.ՀՀ դրամ :

Աղյուսակ 18

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մակերևութային ջրեր	Հայցվող տեղամասից վերև և ներքև իրականացնել մակերևութային ջրերի մոնիտորինգ	ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, հոսքի ուսումնասիրություն	Աշխատանքները սկսելուց առաջ և հետո
Ստորերկրյա ջրեր	տեղամասի շրջակայքում առկա բնական աղբյուրների ելքեր, ստորգետնյա ջրերի հորիզոնների դիտակետեր	- ջրերի քիմիական կազմ, - մակարդակ	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Աշխատանքները սկսելուց առաջ և հետո
Մթնոլորտային օդ	ճանապարհներ, արտադրական հրապարակ, ըստ քամիների վարդերի գերակշռող ուղղությունների՝ արտանետումների աղբյուրից 5 կմ հեռավորություն	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	արտադրական հրապարակ,	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), - հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը, - հումուսի պարունակությունը, - հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- աշխատանքները սկսելուց առաջ և հետո
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան (նկ.16)	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփո-	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Աշխատանքներն ավարտելուց հետո

		խություն		

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի նախնական տեղադիրքը ներկայացված է նկար 19-ում:

Բնապահպանական կառավարման պլանը ներկայացված է աղ. 19-ում:



Նկ.19:Մշտադիտարկման կետերի տեղադիրքը: 1. հողի և ջրի մշտադիտ. կետ - X= 8550068, Y = 4398775, 2. Հողի, ջրի և աղմուկի մշտադիտ. կետ - X= 8548738 Y= 4397174, 3. Հողի, օդի և աղմուկի մշտադիտ. կետ - X = 8548654, Y= 4397787, 4, հողի և օդի մշտադիտ. կետ – X 8549568, Y= 4397707: Կենդանական և բուսական աշխարհի մշտադիտարկումն նախատեսվում է իրականացնել սև շրջագծով առանձնացված տարածքում:

Աղյուսակ 19

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասի բնապահպանական կառավարման պլան

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ	Մեղմման համար պատասխան ատու
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	-աշխատողներին համազգեստով և անհատական պաշտպանության միջոցներով (ԱՊՄ) ապահովում - սարքավորումների շահագործման և ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատանքի պաշտպանության հրահանգների առկայություն	- Ջնման ընթացքում աշխատողները կրում էին համազգեստ և համապատասխան ԱՊՄ - Ջնման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել	«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ տնօրեն
2.հետախուզական աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և արտատումներով: Վերասկումն իրականացնել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի կարգին համապատասխան Կենսաբազմազանության վրա ազդեցություն	- հետախուզական աշխատանքներից առաջացած նյութի պահում հսկվող գոտում և ջրցանում փոշու առաջացումը նվազեցնելու համար - Շրջակա միջավայրը պահել մաքուր բեկորներից փոշու առաջացումը նվեցնելու նպատակով - Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները - մեքենաները չպահել ավելորդ պարապ ընթացքի մեջ Կենդանիների բներ կամ հազվագյուտ և Կարմիրգրքային բուսատեսակներ հայտնաբերելիս դադարեցնել բոլոր տեսակի աշխա-	- Չհսկվող տարածքում առանց ջրցանման բեկորներ չեն հայտնաբերվել - Ոչ մի փորում առանց շարունակական ջրցանման և/կամ փոշուց պաշտպանող էկրանի տեղադրման - Ջնման ընթացքում շրջակա միջավայրը եղել է մաքուր բեկորներից -Ջնման ընթացքում աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրում չի հայտնաբերվել - Ջնման ընթացքում տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց հավելյալ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել	«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ տնօրեն

		տանքները, մասնագետների հետ քննարկել դրանց տեղափոխման և պահպանման միջոցառումները		
	աղմուկ	-Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում, և սարքավորումների՝ բնակելի տարածքներից հնարավորինս հեռու տեղադրում - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում	- Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Զննման ընթացքում սարքավորումները եղել են բավարար տեխնիկական վիճակում - Զննման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել	«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ տնօրեն
3. Հողային աշխատանքներ նախատեսված չէ	-	Ռելիեֆի խախտում չի նախատեսվում: Նախատեսվում է հորատանցքերի լցոնում	-	«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ տնօրեն
4. կենցաղային թափոնների գոյացում	-աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգենիկ պայմանների վատացում	Ուսումնասիրության տարածքում հորատիպ զուգարանի տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	- ուսումնասիրության տարածքում պատշաճ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանների առկայություն	Սպասարկող անձնակազմ
5. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	Ուղղակի և անուղղակի վտանգներ երթևեկությանը և հետիոտներին հետախուզական աշխատանքների ժամանակ	- երթևեկության կառավարման համակարգ և անձնակազմի ուսուցում	- Աշխատանքների հստակ տեսանելի տարածք, հանրության զգուշացում հնարավոր վտանգների վերաբերյալ -Կարգավորված Երթևեկություն	Ինժեներ - երկրաբան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղդասարյան Ա., Համազասպյան Հ., Ալավերդյան Ս. և ուր: «ՀՀ Վայոց Ձորի մարզի Կաքավասարի ոսկի-բազմամետաղային հանքավայրում 2008-2010թթ. կատարված երկրաբանա - Հետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ, 01.07.2010թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ», 162 էջ: Երևան, 2010, Հանրապետական երկրաբանական ֆոնդեր:
2. ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N 06 -Ն
3. Սարգսյան Հ. Հայկական ՍՍՀ ռեգիոնալ երկրատեկտոնիկա: Երևան, ԵՊՀ հրատ., 1988թ., 276 էջ:
4. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
6. Вегуни А.Т. Стратиграфия палеогеновых отложений бассейнов рек Арпа и Воротан Арм ССР. УГ АрмССР, Ереван,1961.
7. Габриелян А.А. Основные вопросы тектвники Армянской ССР, Изд. АН Арм. ССР, 1959.
8. Мартиросян С. В., Амарян В.М., Харазян Э. Х. Отчет групповой геологической съемки масштаба 1:50000 на территории Варденисского и Южно-Севанского геологоэканомических районов Армянской ССР за 1976-80 гг. УГ АрмССР, Ереван,1981.
9. Тоноян Э. Г., Мкртчян А.К., Варданян К.О. и др. Отчет поисковых работ на цветные и редкие металлы в пределах Амулсарского и Какавасарского рудных полей в Азизбековском районе Арм ССР за 1985-88гг. УГ АрмССР, Ереван,1988.
10. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
11. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
12. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
13. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
14. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
15. “Дикорастущие сЪедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
16. https://www.armgeo.am/vayots_dzor/
17. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
18. http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf
19. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայք

Հավելված 1

ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազի ԱԿԽ երևակման հատակագիծ

Մ 1:2 000



Հողամաս			
Շրջադար ձային (բեկման) կետեր	Կոորդինատները		Գծային չափեր
	X	Y	
1	8549089.4755	4397663.6025	
2	8549115.5443	4397691.1721	37.94
3	8549147.9576	4397719.2951	42.91
4	8549189.8516	4397758.8756	57.63
5	8549215.8951	4397793.0557	42.97
6	8549247.0003	4397825.7563	45.13
7	8549263.0007	4397838.3923	20.39
8	8549268.9676	4397840.2367	6.25
9	8549286.8984	4397841.8666	18.00
10	8549296.6018	4397842.1235	9.71
11	8549307.2148	4397843.3099	10.68
12	8549343.9382	4397836.8090	37.29
13	8549362.0795	4397834.9931	18.23
14	8549379.2842	4397834.3642	17.22
15	8549383.5675	4397827.9044	7.75
16	8549354.8914	4397820.7783	29.55
17	8549322.2676	4397806.4275	35.64
18	8549237.5710	4397756.2448	98.45
19	8549215.1081	4397692.4278	67.65
20	8549165.1009	4397687.3405	50.27
21	8549163.9031	4397664.3977	22.97
1	8549089.4755	4397663.6025	74.43

(1) - 1.39հա

Կատարող՝ _____ Ինևա Աղամյան « 10 » հուլիս 2025 թ.
(ստորագրություն) (անուն, ազգանուն) (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայական № 0221, տրված « 06 » ՕԳՈՍՏՈՍ 2012 թ.

Իրավաբանական անձ № 76827145 Ա/Ձ ԻՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ _____ Կ.Տ.
(ստորագրություն)

Հավելված 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (+374281) 2 25 22**

« 14 » « 05 » 2025թ. **N 01/11.1/2967-2025**

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՍԻՄԻԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն նախարար

Ի պատասխան Ձեր 2025 թվականի մայիսի 5-ի թիվ 1/26.6/5044 գրության՝ <<ՎԱՅՔ ՃՇՇ>> ՓԲԸ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման երկրաբանական ուսումնասիրության ՇՄԱԳ հաշվետվության լրամշակված տարբերակի վերաբերյալ՝ տեղեկացնում ենք, որ մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա մրջավայրի պահպանության վարչության մասնագետների կողմից վերոնշյալ տեղամասի տարածքում իրականացվել է ՇՄԱԳ ուսումնասիրություն (հողային և ջրային ռեսուրսներ, բուսական և կենդանական աշխարհ, բնության հատուկ պահպանվող տարածքներ և այլն):

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված տեղամասի տարածքում առկա են 1 հատ ընկուզենու և մոտ 20 վայրի պտղատու ծառատեսակներ:

Խնդրում ենք Ձեզ իրականացվող հորատման աշխատանքների ընթացքում հնարավորինս չվնասել նշված տեղամասի տարածքում առկա ծառատեսակները:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ տեղամասի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Նշված տեղամասի տարածքում բացակայում են կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր և որջեր:

Վերոնշյալ տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում

գրանցված տեսակներ չկան:

Ներկայացված երկրաբանական ուսումնասիրության ՇՄԱԳ փաթեթի վերաբերյալ մեր դիրքորոշումը դրական է:

X _____

Հարգանքով՝ **Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

Կատարող՝ Ն. Սարոյան
Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության
և շրջակա միջավայրի պահպանության
վարչության պետի տեղակալ
Հեռ: +374281-23050
Էլ-փոստ՝ vayotsdzor.gyugh@mta.gov.am